



34(391)  
02.12.2014

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆ ԶԱՆԱՊԱՐԿ



Արցախի գիտակրթական գլխավոր օջախը՝ մայր բուհը, 45 տարեկան է: Ուսումնական տարեշրջանը սկսվել է մշակակալի իրադարձությունը արժանավայել նշելու կապակցությամբ բազմաթիվ միջոցառումների կազմակերպումով, որոնք արգասիք էին մայր բուհի ոչ միայն ներկայիս համգրվանի, այլև անցած չորսուկես տասնամյակի փառավոր ճանապարհի: Իսկ տոնակատարության զագաթնակետը նույնիսկ 28-ն էր, երբ Արցախի մայր բուհի հարկի տակ երկրի օրենսդիր և գործադիր մարմինների ղեկավարների, բուհի նախկին ղեկավարների, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների, ուսանողների մասնակցությամբ հանդիսավորապես նշվեց հարազատ կրթության 45-ամյակը: Միջոցառման մասնակիցները նախ հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան պատերազմում իրենց կյանքը հայրենիքին զոհաբերած բուհի շրջանավարտների հիշատակին, որից հետո ԱրՊՀ նիստերի մեծ դահլիճում մասնակցեցին հորեյանական միստի:

Այն սկսվեց մայր բուհի օրհներգի հնչեցմամբ: Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային, կրթական հարուստ ժառանգությունը, բարձրակարգ մտավորական ուժի առկայությունը պահանջում էին ունենալ բարձրագույն կրթության օջախ, սակայն Արթրեանի իշխանությունները, հարազատ մնալով իրենց հայատյաց քաղաքականությանը, իբր անսակավ դարաբաղցիների ցանկությանը, Ստեփանակերտում

բացեցին Բաքվի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը՝ նպատակ ունենալով դարաբաղցիներին կտրել մայր Հայաստանից, իսկ հետագայում բուհը ինքնուրույն դարձնելով արդբեջանական սեկտորով՝ նպաստել Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ սպիտակ եղեռնի իրագործմանը: Սակայն այդով հանդերձ, Ստեփանակերտի մանկավարժական դարձավ ազգային գաղափարների կուտակման և տարածման կենտրոն, ինչն ավելի ընդարձակվեց 88-ին: Իսկ Արցախյան պատերազմի տարիներին նրա ուշիմ ուսանողները քաջարի տղաների հետ միասին դարձան հայրենիքի վահանը ու սուրը, որոնցից շատերը զոհվեցին հայրենիքի համար մղված մարտերում:

Հանդիսավոր միստի մասնակիցները լուսնային լուսնով հարգեցին վասն հայրենյաց նահատակվածների հիշատակը: Հորեյանի կապակցությամբ ներկայացրին առաջինը շնորհավորեց համալսարանի ղեկավար Մանուշ Մինասյանը: Նրա գնահատմամբ՝ Արցախի մայր բուհը մեկն է հոգևոր և գիտական այն արժեքներից, որն արարել, ստեղծել է իր հետևում մի քանի հազարամյակ թողած հայ ժողովուրդը՝ անցնելով մաքառումների, արհավիրքների ու դաժան փորձությունների միջով: «Հետադարձ հայացք ձգելով բուհի անցած ճանապարհին՝ հպարտությամբ կարելի է փաստել, որ կրթության իր գոյության բոլոր տարիներին ճիշտ է հասկացել ու սրբությամբ է կատարել իր առաքելությունը»,- ասաց Մ. Մինասյանը: ԱրՊՀ ղեկավարը երախտագիտության խոսք ուղղեց բոլոր նրանց, ովքեր կանգնած են եղել համալսարանի ստեղծման ակունքներում, ովքեր իրենց աշխատանքով ու վաստակով նպաստել են

նրա կայացմանն ու զարգացմանը, բոլոր դասախոսներին ու աշխատողներին, որոնց համար համալսարանը դարձել է հարազատ օջախ, բուհի բոլոր ժամանակների ղեկավարներին, ովքեր կատարել են բարձրագույն աշխատանք, և, իհարկե, բոլոր շրջանավարտներին (նրանց թիվը 22 հազար է), ովքեր իրենց գիտելիքներով ու կարողություններով միշտ բարձր են պահել բուհի պատիվն ու հեղինակությունը:

Համալսարանականներին շնորհավորեց և ջերմ բարեմաղթանքներ հղեց Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը, ով ամեն անգամ հպարտությամբ է նշում իր՝ ԱրՊՀ շրջանավարտ լինելու փաստը: «Եթե հետադարձ հայացք ձգենք ու նայենք բուհի անցած ճանապարհին, կարող ենք ասել, որ չնայած դեռևս երիտասարդ տարիքին ու ստեղծված լինելով շատ բարդ ու քաղաքական ծանր իրավիճակում գիտական մեր օջախը միշտ էլ եղել է մեր ժողովրդի հավատարիմ ու զորավոր ուղեկիցը, նրա մտավոր հարուստ գիտանոցը և հայրենասեր ու նվիրյալ մասնագետների պատրաստման դարձնողը»,- ասաց նա: Նրա խոսքով՝ չնայած ծանր ու դժվարին, բայց անցած բոլոր փուլերում էլ ամրապնդվել են համալսարանական ավանդույթները: Եվ ամենամեծ ձեռքբերումը, Ա. Ղուլյանի կարծիքով, նրա տասնյակ հազարավոր շրջանավարտներն են, որոնք կարող են այսօր էլ օգտակար լինել՝ ձևավորելով «Շրջանավարտների միություն» հասարակական կազմակերպությունը: Արցախի խորհրդարանի ղեկավարը տոնի կապակցությամբ պատվոգրերով պարգևատրեց տնտեսաիրավաբանական ֆակուլտետի դոցենտներ Ռիտա Առուստամյանին և Շուշանիկ Ասրյանին: Արցախի մայր բուհի նշանակալից դերը կարևորեց և դասախոսների պաշտատանը բարձր գնահատեց վարչապետ, համալսարանի

խորհրդի նախագահ Արա Հարությունյանը: «Համոզված եմ՝ ոչ միայն անցյալում և այսօր, այլև ապագայում ևս մեծ է լինելու համալսարանի դերը պետականաշինության երկարատև գործընթացում: Այս 45 տարիների ընթացքում մեր դասախոսները պատվով են կատարել իրենց առաքելությունը և վստահ եմ, որ այդպես լինելու է նաև ապագայում»: Որպես ասվածի առիթավառ՝ համալսարանի դասախոսների մի մեծ խումբ արժանացավ վարչապետի հուշամեդալին ու կառավարության պատվոգրերին:

Հորեյանական օրվա առթիվ շնորհավորանքի ու ողջույնի խոսք



ասաց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, ով միշտ կանգնած է եղել համալսարանականների կողքին: «Բոլոր ժամանակներում էլ,- ասաց Ս. Ասրյանը,- մեր դասախոսները, հաղթահարելով դժվարությունները, կարողացել են կատարել իրենց գերագույն նպատակը՝ հանրապետության համար որակյալ մասնագետների պատրաստում, գիտության զարգացում... Այսօր մայր բուհը որոշակի հաջողությունների է հասել՝ համաբալյ իրականացնելով եվրոպական կրթական բարեփոխումները, բարձրագույն կրթության համակարգը Բոլոնիայի գործընթացին անդամակցելու հայտ ներկայացնելով»: Ս. Ասրյանի հավաստմամբ՝ համալսարանի խնդիրները գտնվում են իշխանությունների ուշադրության կենտրոնում և աստիճա-

նաբար իրենց լուծումը կգտնեն: Համալսարանի կայացման ճանապարհին մեծ դեր են ունեցել նրա բոլոր ղեկավարները՝ ստեղծման օրից առ այսօր: Արցախի մայր բուհի կառավարման, նրա կայացման ու զարգացման գործում ունեցած ներդրման համար ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանով պատվոգրերով և արժեքավոր մեդալներով պարգևատրվեցին նախկին ղեկավարներից Շահեն Աբրահամյանը, Բահաթուր Դավթյանը, Համլետ Գրիգորյանը, Ստեփան Դադայանը և ներկայիս ղեկավար Մանուշ Մինասյանը:

Բուհի 45-ամյակի կապակցությամբ և երկարամյա ծառայության համար ղեկավարի հրամանով ԱրՊՀ ոսկե մեդալով պարգևատրվեցին կերպարվեստի ամբիոնի վարիչ Լավրենտ Ղալայանը, հայոց լեզու և գրականություն և օտար լեզուների ֆակուլտետի ղեկավար Էլենուրա Հայրապետյանը, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ղեկավար Կարեն Արամյանը: Մի շարք վաստակաշատ դասախոսներ և այլ ստորաբաժանումների աշխատողներ արժանացան պատվոգրերի, դրամական պարգևների ու հուշանվերների:

«Երբ խոսք է գնում մեր համալսարանի հիմնադրման մասին, պետք է ասել, որ այն ոչ թե առանձին անհատների նախաձեռնությունն է եղել, այլ մեր ժողովրդի, հասարակության, դարաբաղցիների անցած ուղու օրյեկտիվ պահանջը: Դա 60-ական թվականներին էր, այն ժամանակ, երբ ունեցել ենք կայացած սոցիալ-տնտեսական համակարգ, կայացած մտավորականություն, կրթական համակարգ և այլ ամբողջ պահանջը եղել է բարձրագույն կրթության հաստատություն ունենալը»,- ասաց բուհի առաջին ղեկավար Շահեն Աբրահամյանը: Հանդիսավոր միստն ուղեկցվեց համալսարանի ուսանողների երաժշտական կատարումներով: Վերջում ցուցադրվեց համալսարանականների պատրաստած տեսաֆիլմը մայր բուհի անցած ուղու մասին:

Սեփ. լրատվություն

## ՇՐՋԱՆԱԿ, ՈՐ ՊԵՏՔ Է ԲԱՐՉՐԱՆՆԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԱՓՈԽԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Կրթության գերազանցության ազգային ծրագիր. ահա այն նորը, որը պատրաստվում են ներդնել հանրակրթության մեջ և որի շուրջ հանրային քննարկումներ են սկսվել երևանում, Հայաստանի մարզերում, Արցախում: Նույնիսկ 28-ին Ստեփանակերտի «Վալենտ գարդեն հոթել»-ում ներկայացուցչական մեծ խումբ էր հավաքվել. կրթության բնագավառի պատասխանատուներ, ուսուցիչներ, հասարակական, քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ուրիշներ: Նրանք հրավիրվել էին մասնակցելու Կրթության գերազանցության ազգային ծրագրի (ԿԳԱԾ) ներկայացմանը և քննարկմանը: Ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, ծրագրի հեղինակ, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահի խորհրդական կրթության գծով Տեր Մեսրոպ քահանա Արամյանը և այլ ներկայա-

ցուցիչներ: Հանդիսվումը բացեց «Այբ» հիմնադրամի



գործադիր տնօրեն Դավիթ Սահակյանը: Ողջունելով մասնակիցներին՝ նա տեղեկացրեց, որ Կրթության գերազանցության ազգային

ծրագիրը արդեն մեկ տարի է՝ հանրային լուսնում է անցնում, որոնց արդյունքում լրանվելով՝ հաջորդ տարվա մարտ ամսին կստանա իր վերջնական տեսքը: Ծրագիրը ողջունեց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը՝ ասելով, որ կարևոր թեմա է քննարկվում: Կրթության ոլորտը, հատկապես հանրակրթությունը, միշտ էլ գտնվել է հասարակության և իշխանությունների, կառավարման ոլորտի պատասխանատուների ուշադրության կենտրոնում: Այսօր մեր դպրոցը բարեփոխման փուլ է ապրում, և այստեղ նոր առաջարկություններ են արվում, որոնք պետք է նպաստեն կրթության որակի բարձրացմանը: Նախարարը շեշտեց կրթության պահպանողական համակարգ լինելը, որը չի սիրում արագ փոփոխությունները՝ նշելով, որ ինչ որ արվում է, հենվում է անցածի, մեր ունեցածի, ձեռքբերումների վրա, և այս ծրագիրն էլ ստեղծվելու է

այդ հիմքի վրա: Մեկուսացված լինելը չի բերի հաջողությունների, համոզված է նախարարը: Եվ քանի որ Արցախի կրթական համակարգը Հայաստանի հետ գտնվում է նույն դաշտում, նրա հետ միասին որդեգրել է եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու գաղափարը, ինչից էլ բխում է, որ գործողություններ պետք է լինեն միասնական՝ իհարկե, տեղական կառավարման և հանրային կառավարման միջոցով: ՀՀ ԿԳ նախարարի հետ քննարկելով առաջարկվող ծրագիրը՝ Ս. Ասրյանի առաջարկությամբ նրանում ընդգրկվել է նաև Արցախը, և պայմանավորվածության համաձայն էլ տեղի են ունենում քննարկումները: «Այն, որ միջազգային չափանիշներով դպրոց ԼՂՀ-ում ունենալը անհրաժեշտություն է, ոչ մի խոսք լինել չի կարող», - կարծում է ԼՂՀ ԿԳ նախարարը՝ շնորհակալություն հայտնելով ծրագրի հեղինակներին՝ ի դեմս Մեսրոպ քահանա Արամյանի՝ նման նախաձեռնության համար:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՇԱՐՈՒՄ, ՈՐ ՊԵՏՔ Ե ԲԱՐՁՐԱՆՆԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԱՓՈԽԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ



1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՋԱՆՅՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ. ԻՆՉ Ե ԱՅՆ

Ներկայացնում է նրա հեղինակ Տեր Մեսրոպ քահանա ԱՐԱՅՅԱՆԸ:

Ծնվել է 1966թ. հունիսի 20-ին Երևանում: 1983թ. ավարտել է Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցը: 1990թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը՝ տեսաբան-ֆիզիկոսի և ինժեների որակավորմամբ: 1993թ. ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից դասարանը և ձեռնադրվել քահանա: 1993թ. հիմնել և գայտոր դեկավարում է «Գանձասար» աստվածաբանական կենտրոնը՝ իբրև տնօրեն և գլխավոր խմբագիր: Տեր Մեսրոպը հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի թեմական խորհրդի անդամ է և երկու անգամ՝ 1995 և 1999թթ., ազգային եկեղեցական ժողովի պատգամավոր է ընտրվել Արցախից: 2002թ. Մեսրոպ քահանա Արամյանը հիմնադրել է «Վեմ» ռադիոկայանը և մինչև օրս նրա տնօրենը և գլխավոր խմբագիրն է: 2004թ. հիմնել և մինչև օրս դեկավարում է «Վեմ-մեդիա արվեստներ» ստուդիան: 2006թ. մի խումբ ընկերների հետ համատեղ ստեղծել է «Այբ» կրթական հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհրդի նախագահն է: 2010թ. «Վեմ-մեդիա արվեստներ» թողարկել է միջազգային բազմաթիվ պարզանքների ու մրցանակների արժանացած «Արարատից Սիրո» փաստավավերագրական ֆիլմը, որի սցենարի հեղինակը և պրոդյուսերը Մեսրոպ քահանա Արամյանն է: 2011թ. «Այբ» հիմնադրամի կողմից ստեղծվել է «Այբ» ավագ դպրոցը, որի հոգաբարձուների խորհրդի նախագահը և կրթական ծրագրերի հեղինակը Մեսրոպ քահանա Արամյանն է: Դեղինակել է բազմաթիվ գրքեր, հոդվածներ, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, ֆիլմեր, կրթական ծրագրեր ու նախագծեր:

Ամուսնացած է, ունի յոթ զավակ:

- Սա մենք կոչում ենք ծրագիր, որովհետև այլ կերպ չենք կարող նախաձեռնություններ ներկայացնել կառավարությանը, բայց իրականում, ինչ պետք է անենք, չի տեղավորվում «Ծրագիր» հասկացության ծիրի մեջ: Սա ավելի շուտ մի առաքելություն է, և մենք ձեզ հետ այսօր հանդիպում ենք այստեղ, որպեսզի փորձենք ձեզ մասնակից դարձնել այս կարևոր առաքելությանը: Ունանք կարող են մտածել, որ ահա կրթության բարեփոխման հերթական մի ծրագիր է ներկայացվում: Կլինի, չի լինի՝ Աստված գիտի: Պաշտոնական անվանումը կրթության գերագնացության ազգային ծրագիր է, բայց առաքելության ոգով կատարվող գործ է: Ծրագիրն իրականացնողներն են 33 կառավարությունը և «Այբ» կրթական հիմնադրամը: Այն ունի նաև միջազգային գործընկերներ՝ Քեմբրիջի համալսարանը և Լոնդոնի կրթության ինստիտուտը: Այսինքն՝ ծրագիրը ազգային է, բայց իր հիմքով հետապնդում է ամենաբարձր՝ միջազգային որակական չափանիշներ: Նպատակն է՝ որակապես և էապես բարձրացնել հայկական հանրակրթության որակը, այն համապատասխանեցնել աշխարհում գործող ամենաբարձր չափանիշներին, բայց շատ կարևոր մի առանձնահատկությամբ՝ խարսխվում է մեր ազգային արժեքների հիմքի վրա:

Ինչո՞ւ է այստեղ հայտնվել «Այբ» հիմնադրամը: Նրա գործունեության մասին շատերը գիտեն տարբեր ուղիքներով, կրթական ծրագրերով: Արդեն 9-րդ տարին է, ինչ մենք Հայաստանում գործում ենք և իրականացնում ենք մրցույթներ՝ «Կենդուրու», «Մեղու», ուսուցիչների համար վարպետության դասեր, առարկայական խորացված դասընթացներ, լաբորատորիաներ և այլն, փորձել ենք աշ-

խարհի առաջատար տեխնոլոգիաները բերել, կիրառել տարբեր դպրոցներում, փորձարկել տարբեր ծրագրեր, տեսնել ժամանակի մեջ ինչպես են դրանք աշխատում: Եվ այդ ամենը պատահականորեն չենք արել, որովհետև մենք ուզում ենք ստեղծել 21-րդ դարի հայկական դպրոցի մոդելը: Փորձարկումներից վեց տարի աշխատելուց հետո մենք բացեցինք «Այբ» ավագ դպրոցը ու այնտեղ այդ բոլոր բարդորոշները հավաքեցինք մեկ միասնական պատկերի մեջ: Եվ այն, ինչ որ ունենք այդ դպրոցում, ոչ միայն շատ զոհաբերիչ է, այլ և նույնիսկ օրինակելի է համաշխարհային առումով: Այսինքն՝ մենք կարողացանք հավաքելով համաշխարհային լավագույն փորձը և մեր ակունքներից եկող իմաստությունը, սինթեզել այդ ամենը և դրա հիման վրա ստեղծել մի շատ մրցունակ համակարգ: 1000-ից ավելի դասագրքեր ենք ուսումնասիրել, լավագույն դասագրքերը թարգմանվել են հայերեն, որպեսզի վստահ լինենք, որ այսօր հայ երեխան հնարավորություն ունի իր մայրենի լեզվով աշխարհի լավագույն դասագրքերով, մեթոդաբանականներով սովորել և նաև հաղորդակից լինել լիր ազգային հոգևոր արժեքներին:

Իսկ ինչի՞ համար ենք սա արել: Որ գլուխ գովենք և առանձնանա՞նք մյուսներից: Ի սկզբանե մենք ասել ենք, որ կրթությունը որևէ մեկի սեփականությունը չէ: «Այբ» դպրոցը դարձել է մի լաբորատորիա մեր ամբողջ հանրակրթության համար: Հայաստանի տարբեր ծայրերից ուսուցիչներ, տնօրեններ, երեխաներ գալիս-տեսնում են այդ փորձը, և փորձում ենք այն տարածել ամբողջ Հայաստանով մեկ: Մեր հոգաբարձության հետ պարբերաբար 33 նախագահը հանդիպում է, և քննարկումներ էին տեղի ունենում: Նպատակն էր՝ հասկանալ ինչ կա աշխարհում, և ինչպես մենք կարող ենք բարեփոխել մեր կրթության որակը, ինչպես կարող ենք մեր այս ստեղծածը դարձնել բոլորին, այսինքն՝ Հայաստանում և Արցախում բոլորին տալ լավագույն կրթության հնարավորություն: Եվ ահա այս քննարկումների արդյունքում ծնվեց ԿԳՄԾ գաղափարը: Պայման դրվեց, որ ծրագիրը պետք է համապատասխանեցվի ամենաբարձր չափանիշներին, ու դա պետք է հաստատեն միջազգային համապատասխան կառույցները: Մենք պետք է ունենանք միջազգային գործընկերներ, որոնց հետ մշակենք ծրագիրը: Նրանց կողմից պետք է մշտադիտարկվի ծրագրի կատարման որակը: Մենք բանակցել ենք առաջատար կրթական հաստատությունների հետ և վերջում կանգ ենք առել Քեմբրիջի համալսարանի և Լոնդոնի կրթության ինստիտուտների վրա, որովհետև այսօր նրանք ունեն ամենաբարձր փորձառությունը աշխարհում: աշխատում են 125 երկրներում, շատ երկրներում կրթական բարեփոխումներն ամբողջությամբ կատարվել են նրանց կողմից (Սինգապուր, Հոնկոնգը և այլն):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑԱՎԿԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպես երկիր, ազգ՝ հայ ժողովուրդը ունի՞ այսօր մրցակցային առավելություն աշխարհում, որովհետև 21-րդ դարը դարձել է շատ մրցակցային: Եթե այսօր մեկը կրթության մեջ մարդկային ռեսուրսների շեշտադրում չի կատարում, չունի որևէ ապահովագրություն իր գոյությունը շարունակելու կամ ապագա ունենալու: Եվ այսօր բոլոր ազգերի գերխնդիրն է դարձել կրթական հիմնահարցը. ինչպե՞ս լուծել այս խնդիրը, և ինչպե՞ս նախաձեռնել լավագույն կրթությունը տարբեր մշակույթներում և երկրներում: Մենք՝ հայերս, հաճախ ենք ասում, որ չունենք գազ, նավթ, բայց ունենք մարդկային տաղանդ, մարդիկ, երեխաներ, որոնք մեր հիմնական գանձն են: Բայց եթե մենք մի բան անվանում ենք «գանձ», մշակույթն է, որ այդ գանձին համապատասխան պետք է վերաբերմունք ցույց տալ: Եվ գիտենք, որ գանձերը շատ հաճախ նյութական չեն լինում, լինում են անմկայական՝ հոգևոր գանձեր, որոնք շատ ավելի կարևոր են, քան այն նյութական հարստությունները, որոնք կարող են խաբկանք ստեղծել մարդկանց մոտ: Եվ այդ հոգևոր գանձերը Արցախյան գոյամարտի ժամանակ մեզ ավելի օգնեցին, քան ֆիզիկական գանձերը: Հոգևոր գանձի գիտակցության շնորհիվ է, որ կարողացանք միավորվել և տանել այդ հարթանակը:

Եվ երբ մարդու մասին ասում ենք, որ ամենամեծ գանձն է, և մայ ժողովուրդը իսկապես ունի այդ մարդկային տաղանդը, ուրեմն պետք

է փորձենք նրան պատշաճ վերաբերվել: Եվ փորձենք նաև մասնակիցը դառնալ այդ գանձերի մշակման: Ինչո՞ւ ենք այս հանրային քննարկումները սկսել: Նախ և առաջ այն պատճառով, որ տեսնում ենք, որ մեր հասարակության մեջ կա բավականին մեծ պասիվություն կրթության նկատմամբ: Այլ կերպ ասած՝ հասարակությունը ինքը մասնակիցը չէ, պահանջատերը չէ կրթության: Չկա մարդ, որն ուղղակի կամ անուղղակի ձևով չառնչվի կրթությանը, և որևէ մեկը չի կարող ասել՝ կրթությունն իմ գործն է: Դա բոլորի գործն է և ոչ միայն՝ կրթության մասնագետների: Բայց հասարակությունն այսօր կրթության որակի պահանջ չի ձևավորում: Նա դարձել է մի տեսակ կրթության սպառող, այսինքն՝ որևէ մեկը պարտավոր է կրթություն մատուցել իրեն: Որևէ մեկը պարտավոր չէ: Եթե մենք այդպես մոտենանք կրթությանը, կունենանք այն, ինչ որ ունենք, և երբևիցե կրթության զարգացման հեռանկար չենք ունենա: Այլ կերպ ասած՝ հասարակությունը պետք է տեր կանգնի կրթությանը: Եվ իր բոլոր ուժերով, հնարավորություններով պիտի համախմբված լինի դպրոցի շուրջ: Դպրոցն իրականության մեջ պետք է լինի հասարակության կյանքի կենտրոնը: Ոչ միայն երեխաները, ծնողները, տատիկ-պապիկները, բոլորը պետք է մտնեն դպրոց, և բոլորը պետք է դուրս գան դպրոցից, բոլորն ունեն տալու և վերցնելու բան: Դպրոցը դպրոց է ոչ միայն երեխաների համար. այն իրականության մեջ պետք է լինի կյանքի մեծ դպրոց բոլորի՝ ամբողջ հասարակության համար: Եվ այս քննարկումների նպատակն էլ հենց դա է՝ արթնացնենք մեր մեջ յուրահատուկ ոգի և տեր կանգնենք կրթությանը, կարողանանք բոլոր հնարավոր միջոցներով նպաստել կրթության զարգացմանը, որովհետև հասկանում ենք, որ այդ կրթությունն է և կախված մեր ապագան: Այսօր աշխարհում և ցանկացած ծրագիր, սկսած թիզից մինչև պլաններից, անիմաստ կդառնա, եթե չունենա կրթական բազա: Ցանկացած գործարար ծրագիր ունի կրթական մաս, այսինքն՝ ինքը պետք է ցույց տա, որ ապահովելու է ծրագրի իրագործման համապատասխան մարդկային ռեսուրսը, այնպես այդ ծրագիրը կդառնա անիմաստ: Կյանքն այսօր ամբողջովին կախված է կրթությունից: Եթե ուզում ենք իրագործելի տեսլական ունենալ, որպես ազգ ապագա ունենալ, հենց այսօր պետք է մեզանից յուրաքանչյուրը հասկանա, որ ինքը իր ներդրումը պետք է կատարի կրթության մեջ, այնպես ապագայի մասին մեր բոլոր խոսակցությունները կլինեն հաճելի ոգևորություններ: Իրական ընթացք ստանում է միայն այն դեպքում, երբ մենք մեր երեխաներին տալիս ենք իրենց տաղանդը՝ իրագործելու իրական ու լիարժեք հնարավորություն: Չեն ուզում փորձել մեր կրթությունը. ունենք ձեռքբերումներ՝ խորհրդային տարիներից ժառանգած, ի վերջո համակարգ ունենք դարերի խորքից եկող՝ մեր արժեքները, մեր իմաստությունը և այլն, բայց եթե մեզանից յուրաքանչյուրն այսօր հարցնի՝ արդյո՞ք մեր կրթությունն համապատասխանում է մեր տաղանդին, երևի կկասկածենք՝ դա այդպես է, թե՛ ոչ: Ուրեմն, այստեղ իսկապես մենք անելիք ունենք:

ՈՒՍՈՒՑԻՉԸ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՆՆ Է

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ կրթությունը գլխավորաբար կախված է մեկ գործոնից՝ ուսուցիչից. ինչպիսի ուսուցիչ ունեն, այնպիսի կրթություն ունեն: Եվ հատկապես այն երկրներն են այսօր աշխարհում առաջատար տեղ գրավում կրթության մեջ, ովքեր կարողացել են ազգային համաձայնության մեջ ստեղծել առաջատար, հզոր ուսուցիչների կրիտիկական գանձված: Երբ ասում ենք կրիտիկական գանձված՝ նկատի ունենք, որ այդ ակնհայտ, բարձրագույն որակները դառնում են ինքնավերաբարձրող, այսինքն՝ երբ տարածվում են և կարողանում են այդ կրիտիկական գանձվածն ապահովել: Աշխարհի մի շարք երկրներ ունեն տպավորիչ փորձ. օրինակ, ֆինլանդիայի, Կորեայի կամ Հոնկոնգի կրթական համակարգը: Այդ երկրները կարողացել են լավագույն մարդկային կապիտալը ազգային մեղքի համաձայնությամբ ուղղորդել դեպի կրթություն: «Մասնագիտություն» բառով չեն կարող ուսուցիչ կատարած աշխատանքը բնորոշել: Դա կոչում է, առաքելություն: Դա մարդկանց սրտերում կատարելություն, սովորելու կրակ վառելու մի հատկություն է: Եվ այդ առաքելության բնույթը աստ-

վածային է, մեզ՝ հայերիս համար բարձրագույն մի բան է: Երբ ասում ենք՝ ուսուցիչ, անշուշտ, առաջինը Մեսրոպ Մաշտոցն է գալիս մեր աչքի առաջ: Եվ ամեն ուսուցիչ պիտի նմանվի այդ գերագույն կերպարին: Կատարելատիպը պետք է լինի Մաշտոցը: Բայց մենք նաև ուսուցիչ ենք կոչում մեր Տեր Հիսուս Քրիստոսին, այսինքն՝ Աստված ինքն է դարձել մեր ուսուցիչը, և իսկապես, ո՞վ կարող է սովորեցնել, եթե ոչ ինքը՝ Աստված: Նշանակում է՝ ուսուցիչը երկրի վրա Աստծո թարգմանն է, Աստծո ներկայացուցիչը: Նա աստվածային մի գործ է կատարում, որովհետև մարդու հոգեկերտումը արարման մի պրոցես է, դա աստվածային բնույթ ունի: Եվ ահա այսպիսի մի սրբազան մասնագիտության մասին ենք խոսում, անվանում ենք մասնագիտություն, բայց դա կոչվում է առաքելություն: Եվ այն, ինչ ցույց են տալիս տարբեր երկրների տպավորիչ օրինակները, որ կարողացել են ստեղծել լավ կրթական համակարգ, ապահովել են առաքյալ ուսուցիչներ այդ համակարգի համար: Պետք է նաև հասկանանք, որ այդ ամենը դարերով ունեցել ենք, երբ նայում ենք մեր պատմությանը: Դարերով ունեցել ենք ներքին մի իմաստություն և կարողացել ենք լավագույն մարդկային ռեսուրսն ուղղորդել դեպի կրթություն: Ովքեր են եղել մեր ուսուցիչները՝ Մաշտոց, Սահակ Պարթև, Հովհաննես Սարկավազ, Մխիթար Գոչ, Հովհաննես Երզնկացի, Գրիգոր Տաթևացի... Նրանք եղել են ուսուցիչներ և ուսուցչապետեր: Այսինքն՝ եթե դու տաղանդ ունեիր, փայլում էիր, կարողանում էիր փոխել մարդկային հոգիները, դու անպայման պետք է գնայիր դպրոց և անպայման քո հոգու լույսերից մաս-մաս բաժին հաներիր ապագա սերունդ կերտելու համար: Այդպես է եղել նաև 20-րդ դարում: Ովքեր են եղել 20-րդ դարում մեր ուսուցիչները՝ Աճառյան, Կոմիտաս, Հովհաննյան, Մանանդյան և այլ շատ մեծեր, որոնք, լինելով գիտնական, եղել են դպրոցում՝ հասկանալով, որ ինչ էլ իրենք անեն, ինչ գիտություններով էլ զբաղվեն, ինչ ստեղծագործական թռիչքների մեջ էլ լինեն, պետք է ծառայեն կրթությանը: Որովհետև այդ գանձերը, որ իրենք ունեն, իրենց անձնական սեփականությունը չեն, դրանք ժառանգել են իրենց նախնիներից՝ Աստծո նախախնամությամբ, և սրբազան պարտք ունեն դա փոխանցելու ապագա սերունդին:

Եվ այս ծրագրի հիմնական նպատակն է՝ կարևորել ուսուցչի դերը՝ հասկանալով, որ լավագույն կրթությունը կախված է մեկ գործոնից՝ ուսուցչից: Շատ իրապետեր կրթական համակարգեր, որոնք ցույց են տալիս լավագույն արդյունքներ, և բոլոր մասնագետները աշխարհում եկել են միասնական եզրահանգման՝ առաջադիմը ուսուցիչն է, համակարգը ծառայում է ուսուցչին: Ֆինլանդիայում, որտեղ ամենագարգած կրթության համակարգն է աշխարհում, ամեն մարդ ուզում է դառնալ ուսուցիչ, որն ամենապատվաբեր մասնագիտությունն է (մի տեղի համար մրցում է 20 հոգի): Եվ թեկուզ ամենաբարձր վարձատրվողը չէ, բայց մի զարմանալի ծագում կա դեպի այդ մասնագիտությունը, սերունդների երկխոսությունը, լավագույն որակները հաջող սերնդին փոխանցելու մեծ ցանկություն, ազգային համաձայնություն կա այս խնդրի շուրջ: Ֆինլանդիայի կրթության նախարարը ցավով ասում է, որ իրեն չհաջողվեց դառնալ ուսուցիչ, ստիպված դարձավ կրթության նախարար:

Մենք ունենք այդ պատմական հիմքերը, տեսնում ենք նաև, որ աշխարհի առաջատար փորձն էլ գալիս է ապացուցելու, որ մենք դարձնում ճիշտ ուղի ենք բռնած եղել, և այս ծրագրի հիմնական նպատակն էլ ուսուցչի դերը կարևորելն է, և մեր հասարակության լավագույն ուժերը ուղղորդելը դեպի կրթության ոլորտ: Գաղտնիք չէ (և սա միայն Հայաստանում չէ), թե ինչ միավորներով են այսօր մարդիկ ընդունվում մանկավարժական բուհեր: Ամենացածր: Այսինքն՝ ստացվում է, որ եթե ուրիշ տեղ անելու բան չունեն, գնում ուսուցիչ են աշխատում: Մինչդեռ ճիշտ հակառակը պիտի լինի: Ամենաթվավոր տեղը պետք է լինի դա, և ամենատաղանդավոր մարդիկ պիտի ուզենան ուսուցիչ դառնալ: Իսկ այսօր տաղանդավոր մարդը փնտրում է այն իրագործելու այլ ասպարեզ: Եթե այսօր հասարակական հարցում կատարենք մեր երեխաների շրջանում, թե նրանք ինչ մասնագիտություններ են նախընտրում, կտեսնենք, որ կրթության սպասավորի մասնագիտությունը վերջին տեղերից մեկն է: Վերջերս Լոնդոնի կրթության ինստիտուտի հետ դիտարկումներ ենք կատարել Հայաս-

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱՆԱԿՐԻԱՏ

տանի տարբեր դպրոցներում: Նրանք ասացին, որ վերջերս Անգլիայում սոցիալական հարցում են կատարել դպրոցի շրջանավարտ աշակերտների մեջ՝ հասկանալու, թե որ մասնագիտությունն է համար մեկը երեխաների համար, և պարզվել է, որ առաջին տեղում ուսուցիչն է, երկրորդը՝ գրողը: Եթե մենք հարցնենք, այս երկու մասնագիտությունները հավանաբար կլինեն ամենավերջին տեղում: Նշանակում է, որ մենք՝ որպես հասարակություն, ունենք լուրջ անելիք: Եվ սա չպետք է լինի առանձին ծրագրի նպատակ, այլ պիտի դառնա հասարակության գերհնդիքը: Մենք այս արժեքները, գաղափարախոսությունը, առաքելությունը պետք է կարողանանք տարածել ամբողջ մեր հասարակությունով մեկ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱՆԱԿՐԻԱՏ

Անշուշտ, լավագույն կրթության հնարավորությունը կախված է ուսուցիչից, բայց պետք է նաև նկատի ունենալ, որ ուսուցիչ գործը պետք է դարձնել հարմար, և նրան պետք է ընձեռել լավագույն հնարավորությունները իր սպասավորությունը կատարելու համար: Այդ սպասավորին՝ հոգիների մշակին, իսկապես պետք է լավ նայենք: Նախ՝ տանք նրան բոլոր այն արդիական հնարավորությունները, որ այսօր աշխարհում կան՝ մեթոդաբաններ, տեխնոլոգիաներ, դասագրքեր և այլն: Եվ անընդհատ բարձրագույն կրթություն: Այսինքն՝ վստահ լինենք, որ մեր հայ ուսուցիչն օգտվելու է այն բոլոր հնարավորություններից, որոնցից օգտվում են աշխարհի ուսուցիչները: Եվ այդ իսկ պատճառով մենք «Այբ» դպրոցի փորձառության վրա մեր միջազգային գործընկերների հետ ստեղծում ենք մի նոր կրթական համակարգ, որը կոչվելու է Արարատյան բակավարձիատ: Սա չպետք է շփոթել համալսարանական բակավարձիատի հետ: Սա դպրոցական բակավարձիատ է: Որպես հայ ժողովուրդ՝ մենք հավակնություն ենք ներկայացրել հայտնվելու կրթության գերազանցության համաշխարհային քարտեզի վրա և ունենալու մեր լեզվով և մեր արժեքներով, բայց համաշխարհային ամենաբարձր չափանիշներին համապատասխան կրթական համակարգ: Հիմա Քենդրիքի համալսարանի հետ վերջնական լրամշակումներ ենք կատարում, զարմանից սկսելու ենք հավաստագրման գործընթացը և հուսով ենք, որ 2015թ. ընթացքում մենք կհավաստագրվենք և որպես ժողովուրդ կունենանք մեր ազգային կրթական գերազանցության հարթակը, որը նաև կճանաչվի մեր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, հուսով ենք, որ նաև Արցախը կհետևի Հայաստանի օրինակին, և կիրառելի կլինի մեր դպրոցներում:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Արարատյան բակավարձիատը:

Արարատյան բակավարձիատը մի սինթեզ է այսօր աշխարհում գործող գերազանցության պատճառների և մեր հոգևոր-ազգային արժեքների: Մենք հետևել ենք լավագույններից լավագույնը վերցնելու օրինակին, և դրանք հատուկ աղապատացրել, հարմարեցրել ենք մեր երկրի կարիքներին և ստեղծել մերը: Մենք չենք շարժվել պատճենահանումների ճանապարհով, որն ամենահեշտ բանն է: Մենք ունենք մի մերձեցում, որը զախիս է դպրոցի խորքից՝ մեր թարգմանիչների օրինակից: Ի՞նչ արեցին նրանք. զննեցին աշխարհի տարբեր ակադեմիաներ, սովորեցին, վերադարձան և ստեղծեցին մեր ազգային դպրոցը: Եվ այն դարձավ մեր ինքնուրույն շարունակականության յուրահատուկ ազգային-հոգևոր մշակույթի հիմք: Եվ ինչ որ առումով այն հայերի համար դարձել է եզրահանգում, գոյաբանություն, որովհետև դրանցով է, որ մենք գոյատևել ենք. կորցրել ենք արտաքին մակրոտնտեսագրեր, պետություն, ուրիշ լծի տակ ենք ապրել, բայց ունեցել ենք շատ ուժեղ կրթություն և ամուր արժեքներ և դրանց շնորհիվ կարողացել ենք ոչ միայն գոյատևել, այլ նաև կանգնել աշխարհի մեծերի կողքին: Շատ ազգեր կան, որ կորցրել են ամեն ինչ, անգամ իրենց լեզուն. դպրոցիների պես ազգը, որ հին եգիպտացիներն են, չկարողացան անել մի բան, որ արել են մեր տուր թարգմանիչները, ինչի շնորհիվ մենք կանգնել ենք աշխարհի հզորների կողքին՝ որպես ինքնուրույն ազգ և ժողովուրդ:

Այդ ներշնչանքից ելնելով, նրանց օրինակին հետևելով՝ փորձել ենք մի բան անել 21-րդ դարի համար, այսինքն՝ փորձել ենք նորից հավաքել լավագույնը, ինչ որ կա աշխարհում՝ առանց պատճենահանումների և ստեղծել դրա հիման վրա մերը: Որպես ժողովուրդ՝ մենք ասում ենք՝ որն է մեր արժեքը, և թե ինչ-

պիսի մարդ ենք ուզում դաստիարակել և ձևավորել: Շատ հաճախ, երբ տարբեր լսարաններում ելույթ են ունենում և խոսում են ազգային դպրոցի, ազգային արժեքների մասին, հարց են ուղղում՝ իսկ դուք գիտե՞ք՝ որոնք են այդ արժեքները, երկնից տեսել էք սահմանված, ինչպե՞ս ենք դրանց տեր կանգնում: Այսօր ի՞նչ արժեքներով են դաստիարակվում մեր երեխաները, անցե՞լ է այդ մարդը համապատասխան պատրաստություն, ի՞նչ գործիքներով է անում, ինչպե՞ս է չափում, գնահատում: Ու եթե չկա հասարակական պահանջ, դպրոցներն անում են՝ ինչպես կարողանում են: Այդ բեռը դրված է ուսուցիչների վրա, մեկը՝ լավ, մեկը՝ վատ, անում է: Ուսուցիչները հիմնականում մտահոգվում են առարկայական գիտելիքների փոխանցմամբ, քան մարդու ձևավորման հիմնախնդիրներով: Եվ մենք շատ հաճախ այդ գործը թողնում ենք կրթական հաստատությունների վրա. թող նրանք դրանով զբաղվեն՝ առանց հասկանալու, թե մենք ինչ հասարակական պատվեր ենք տվել և նաև ինչ որակներով մարդ ենք ուզում դաստիարակել, ինչ պատկանելության տեր մարդ ենք ուզում դուրս գա հայկական դպրոցից:

Այս խնդիրը շատ կարևոր է Արարատյան բակավարձիատի համար: Եվ երբ ասում ենք՝ կրթության գերազանցության ազգային հարթակ, հասկանում ենք երկու կարևոր բան՝ և՛ առարկայական բովանդակությունը, և՛ մարդկային հատկանիշների ձևավորման ամբողջ գործընթացը, որը կարևորագույն խնդիրն է այսօր կրթությունում:

ԿԳՍԻ ԻՐԱՎԱՆՑՄԱՆ ՓՈՒՆԵՐՈՒ

Ծրագիրը պաշտոնապես սկսվել է 2014թ. սեպտեմբերին: Մինչ այդ բավական ինտենսիվ կերպով նախապատրաստական աշխատանքներ են կատարվել. ուսումնասիրություններ, միջազգային գործընկերների հետ փոխհարաբերությունների ստեղծում, կառավարության հետ համաձայնեցում: 2014-2016թթ. ընթացքում Արարատյան բակավարձիատն ամբողջապես լրամշակվելու, գրանցվելու և պատրաստ է լինելու 2016թ. աշնանը դպրոցներ մտնելու: Սա արվում է Քենդրիքի համալսարանի հետ միասին: Լոնդոնի կրթության ինստիտուտի հետ միասին պատրաստում ենք ուսուցիչների վերապատրաստման բոլոր ընթացակարգերը, փաստաթղթավորումը և ամենակարևորը՝ պատրաստում ենք այդ ուսուցիչներին պատրաստող ուսուցիչներին, փորձագետներին, և մինչև 2016թ. սեպտեմբեր ունենալու ենք և կրթական համակարգը և ուսուցիչների պատրաստման ինստիտուտը: 2016-ից մինչև 2019 թվականը 12 ավագ դպրոց Հայաստանում և մեկ ավագ դպրոց Արցախում ամբողջովին կանցնեն Արարատյան բակավարձիատ, այսինքն՝ այդ դպրոցների կրթական ծրագիրը կլինի Արարատյան բակավարձիատը, այնտեղ կմտնեն կամ վերապատրաստված կամ լրիվ նոր ուսուցիչներ: Այդ ընթացքում պատրաստվելու է 500 ուսուցիչ: Նրանք ստանալու են Արարատյան բակավարձիատի որակավորում, այսինքն՝ դառնալու են միջազգային որակավորման ուսուցիչներ: Իսկ մինչև այդ՝ 2016 թվականի աշուն, օրենսդրական փոփոխություններ պետք է կատարվեն, «Կրթության մասին» օրենքում պետք է արտացոլվի «միջազգային ուսուցիչ» տարակարգի կամ որակավորման հասկացությունը: 2019-ից 2023 թթ. ընթացքում Արարատյան բակավարձիատը Հայաստանում և Արցախում ընդգրկվելու է բոլոր ավագ դպրոցները: Սրանով ՀՀ-ում և ԼՂՀ-ում յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տրվելու սովորել լավագույն կրթական ծրագրերով և լավագույն ուսուցիչներով:

Ծրագրի 3-րդ փուլում պատրաստվելու է ևս 1500 ուսուցիչ: Արդյունքում՝ 10 տարվա ընթացքում Հայաստանում ունենալու ենք 2000 միջազգային որակավորմամբ ուսուցիչներ:

Այժմ՝ մի փոքր ազդեցության շրջանակների մասին:

Արարատյան բակավարձիատի որակավորման մեջ նույնպես կա երկու մակարդակ՝ Արարատյան բակավարձիատի ավագ ուսուցիչներ և ուսուցիչներ: Յուրաքանչյուր ավագ ուսուցիչ լինելու է ղեկավարը Արարատյան բակավարձիատի 10 ուսուցիչների, այսինքն՝ 10 ուսուցիչներ կապված են լինելու մեկ ավագ ուսուցիչի հետ, որը լինելու է նոր տեխնոլոգիաների, մեթոդների, բոլոր նորարարությունների տարածողը կրթական համակարգում: Եվ Արարատյան բակավարձիատի յուրաքանչյուր ուսուցիչ պարտականություն ունի (այլապես կա-

րող է իր որակավորումը կորցնել) աշխատելու 10 ոչ Արարատյան բակավարձիատի ուսուցիչի հետ՝ այդ նոր գիտելիքը, մշակույթը տարածելու և, ինչու չէ, նրանց մեջ ծրագրին միանալու ցանկություն առաջացնելու: Այսպիսով, ծրագրի ազդեցության շրջանակում 10 տարվա ընթացքում կհայտնվի 20 հազար նոր մարդ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱՆԱԿՐԻԱՏԻ ՈՐԱԿՎՈՐՈՒՄ ՍՍՏԱՆՈՒ ՈՐԻՆԵՐԸ

Ովքեր կարող են մասնակցել այս ծրագրին: Նախ՝ սա կոչ է բոլոր գործող ուսուցիչներին՝ կատարելագործվելու և իրենց ուժերը փորձելու, այսինքն՝ դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ կարող է դառնալ ծրագրի մասնակից, եթե, իհարկե, ունի նվազագույն պահանջները: Նվազագույնը լինելու է մագիստրոսի աստիճանը (կամ նախկին բարձրագույն 5 տարվա կրթությունը) և նաև՝ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտ քննությունը: Սա կոչ է բոլոր գործող ուսուցիչներին՝ վերապատրաստվելու և այս ծրագրին մասնակցելու, մասնագիտական բարձունքների հասնելու:

Երկրորդը նոր ուսուցիչ ուղին է: Հենց այս ոլորտում տեսնում ենք հիմնական մարտահրավերները: Նպատակն է՝ երիտասարդների



համոզել, որ դառնան ուսուցիչ, զբաղվեն շատ հարգված գործով: Ուսուցիչ մասնագիտությունը դարձնենք հարգված ոչ միայն նյութապես, այլև բարոյապես: Երբ «Այբ» դպրոցը հիմնում էինք, բոլորը մեզ ասում էին՝ հիմա ի՞նչ եք անելու, վերցնելու եք մյուս դպրոցները դատարկե՞ք, բոլոր լավ մասնագետներին քաշելու եք, տանք ձեր դպրոց և վնաս եք հասցնելու մնացած դպրոցներին: Մենք ասացինք, որ այդպիսի ճանապարհով չենք շարժվելու: Փորձում ենք ուսուցիչներ ընդունելու մի ճանապարհ երևան համել: Գնացինք համալսարաններով շրջեցինք: Հետաքրքրվեցինք, թե որոնք են ամենավաղ ուսանողները: Առանձին-առանձին նրանց հետ աշխատանք տարանք, համոզեցինք, որ գան դպրոցում էլ աշխատեն: Հետաքրքիր սինթեզ արեցինք գիտության, մշակույթի և կրթության: Մեր ուսուցիչներից 9 հոգի իրենց թեկնածուական թեզը պաշտպանել են «Այբ» դպրոցում դասավանդման գուճահետ:

Երրորդը երկրորդ մասնագիտություն ուղին է: Այն մարդիկ, ովքեր այլ գործերով են զբաղված, լինի լաբորատորիայում աշխատող գիտնական, արվեստագետ և այլն, երբեք չեն մտածել ուսուցիչ դառնալու մասին, թեպետ ունեն այդ որակավորումներ իրենց կրթության: Նրանց համոզեց, բերեց դպրոց: Մենք հրավիրեցինք բազմաթիվ գիտնականների ոչ միայն Հայաստանից, այլև Սփյուռքից: Հրավիրեցինք գալու ոչ թե պարզապես դաս տալու, այլև գալու մարդկային հոգիներ հեղաշրջելու, հեղափոխություն անելու: Եկան: Մեր ուսուցիչների մեծ մասը մինչ այդ դպրոցում չի դասավանդել: Ամեն կերպ փախել է դպրոցից: Բայց մեզ հաջողվեց այդ մարդկանց բերել դպրոց: Հիմա որ նրանց հարցնում են՝ որո՞նք են ձեր կյանքի ամենամեծ փորձառությունը, լավագույն էջերը, ասում են՝ «Այբ» դպրոցում դաս տալը: Մենք եկանք «Այբ», և մեր կյանքը փոխվեց:

Փոխվեց ոչ միայն այն պատճառով, որ «Այբ»-ը շատ լավ է, ո՛չ, բերեցինք և հնարավորություն տվեցինք այդ պայծառ երեխաների հետ շփվելու, երիտասարդանալու, փոխվելու: Եվ կրթությունը տալիս է այդ հնարավորությունը: Մենք ինչ-որ առումով փրկում ենք այդ մարդկանց՝ բերելով դպրոց:

Եվ այս աշխատանքը պետք է կատարենք մեծ սիրով և նվիրվածությամբ:

Մենք մի քանի մարզերում հանրային քննարկումներից հետո եկել ենք Արցախ, ամեն-

ունը նկատվում է մի հսկայական հետաքրքրություն ծրագրի նկատմամբ: Ասում են, որ նոր շունչ ենք տալիս դպրոցին, և մեծ հույսեր են կապում ծրագրի հետ: Բայց իմ կոչն է՝ միացնել մեր բոլորի ջանքերը և մեր միջից դուրս վանել անհավատությունը, թե կարող ենք մի լավ բան անել: Անհավատությունը չարորակ բան է, որ մտնելով մարդու մեջ՝ քայքայում է նրա էությունը: Առանց հավատքի հնարավոր չէ ապրել: Մենք պետք է հավատանք, որ կարող ենք իսկապես մեծ գործեր անել, և եթե հավատանք և մեր ջանքերը միավորենք, մենք կարող ենք կանգնել աշխարհի ամենահզոր ազգերի կողքին: Չկալավածեք:

ԵՐԱՋԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՐԱՐԱՏ ԴԱՏՐԱՍԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Քննարկման մասնակիցները հնարավորություն ունենան իրենց հարցերն ուղղելու բանախոսին: Այնուհետև տեղի ունեցավ խմբային աշխատանք. առաջադրված հարցերի շուրջ մասնակիցներն իրենց կարծիքները հայտնեցին, որոնք, ծրագրի նախաձեռնող խմբի հավաստմամբ, կհամախմբվեն և լրամշակված իրենց արտացոլումը կգտնեն ծրագրում:

Վերջում ամփոփիչ խոսքով նորից հանդես եկավ Տեր Մեսրոպ քահանա Արամյանը՝ շնորհակալություն հայտնելով արդյունավետ աշխատանքի համար: Նորից ասաց, որ քննարկումների նպատակն է մարդկանց կարծիքները լսելով ծրագիրը համապատասխանեցնել հանրային պահանջին: Մասնակիցները նաև մատնացույց արեցին այն դժվարությունները, որոնք կհանդիպեն ծրագրի իրագործման ժամանակ: Մեսրոպ քահանան ասաց, որ իրենք զգում են ծրագրի ամբողջ պատասխանատվությունը: Բայց կյանքում որևէ լավ գործ հնարավոր չէ պատկերացնել առանց դժվարությունների հաղթահարման: Կլինի նաև դիմադրություն, բայց նաև՝ մեծ աջակցություն: Այդ աջակցությունը նա տեսավ մարդկանց հայացքներում՝ այստեղ և ամենուր: Դա զորակցության ոգին է: Մարդկանց մեջ կա ինչ-որ լավ բան անելու բարի ցանկությունը: Պետք է կարողանալ ճիշտ ճանապարհ ցույց տալ նրանց՝ այդ դրական էներգիան օգտագործելու: Նա համոզված է, որ այս ծրագիրը շատերին նման հնարավորություն կտա՝ մեկին մասնագիտանալու, մեկին այդ մասնագիտացման օգնելու, մեկին այլ ձևով նպաստելու, համախմբելու:

Ծրագրի մեջ շատ աշխատանք կա, նրան մասնակցելու կոչված են բոլորը: Երբ խոսվում է՝ ինչպես համախմբվել դպրոցների շուրջ, նա բերում է իրենց օրինակը. մի քանի մարդկանց համախմբումից ծնվեց մի ծրագիր, որը ծավալվելով՝ դարձավ մեծ շարժում, բայց չէ որ բոլորն էլ ինչ-որ դպրոցի շրջանավարտ են և կարող են համախմբվել մայր դպրոցների շուրջ: Չէ որ ոչ միայն ֆիզմաթ դպրոցի սաները (որպիսիք ծրագրի հիմնադիրներն են) կարող են համախմբվել, յուրաքանչյուր դպրոց ունի իր հայտնի անհատները, որոնք կարող են համախմբվել իրենց դպրոցների շուրջ և իրենց նպաստը բերել նրանց զարգացմանը: Այդ դեպքում իսկապես դպրոցը կդառնա հասարակական կյանքի կենտրոն, և ամենակարևորը՝ սերունդների երկխոսությունը չի դադարի:

Իհարկե, խնդիրներ շատ կան, բայց Տեր Մեսրոպը վերաբժավ խնդիրների խմորին և հանդիպումն ավարտեց այս կոչով և ցանկությունն էր, որ բոլորը զնն այս զգացողությամբ. «Առանց հավատքի որևէ բան չի կատարվում»: Հանդիպման ժամանակ հնչեցվեց նուտայայտ մասին, բայց «նուտայայտ շատ կարևոր բան է, ուսուցիչն արագանք է, բայց անհիմաստ երազվտությունը չէ: Երազանք՝ որպես արարման պատրաստակամություն, որ պատրաստ ենք ծառայել այդ երազանքին, պատրաստ ենք մղվել գործի, գործով ամրապնդվող երազանք է: Դա շատ կարևոր է հասարակության համար: Հասարակությունը պետք է ունենա առողջ իդեալներ, դրանք պետք է համապատասխանեն իր ազգային հոգեկերտվածքին և իհարկե պետք է պատրաստ լինի ամեն օր դրա համար աշխատել: Դա կոչվում է հավատքի աշխատանք»:

Նա վստահ է, որ այդ հավատքից ծնվելու է շատ պայծառ ապագա: Նույնիսկ ամենամահավանական իրավիճակում, երբ այլևս հույս չկա, պետք է հավատալ և երբեք չընկնել անհավատության գիրկը, քանզի անհավատությունից ոչ մի բարի պտուղ մարդկության պատմության մեջ չի ծնվել:

ԽՆԿԱՐԿՈՒՄ

ՆՐԱ ԴԱՍԵՐԸ ԲՈՒՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆ

Անվանի մանկավարժ Արսեն Խաչատրյանը ծնվել է 1911թ. փետրվարի 14-ին Գորիսի շրջանի Խնածախ գյուղում: Բարձրագույն կրթություն ստացել է Բաքվում, ավարտել է մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը և 1938թ. աշխատանքի նշանակվել Շուշիում՝ որպես մանկավարժական ուսումնարանի տնօրեն: Իր երկարամյա և բեղուն մանկավարժական գործունեության ընթացքում նա ղեկավարել է երեք ուսումնական հաստատություն՝ 1938-1960թթ.՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանը, 1960-1981թթ.՝ Շուշիի հ. 2 գիշերօթիկ, և 1981-1992թթ.՝ Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցները: Ավելի քան կես դար նրա ղեկավարությամբ գործող մանկավարժական կոլեկտիվներն ամեն ինչ արել են մատաղ սերնդին հայեցի դաստիարակելու, նրանց մեջ հայի ոգին անկտորում պահելու համար:

Տնօրեն Արսեն Խաչատրյանն աստվածաշնորհ կազմակերպիչ էր: Նա ողջ էությանը եռանդ էր: Հայրենական պատերազմի դժվար տարիներն էին: Հնուտ կազմակերպիչը կարողացավ ստեղծել ուսումնասիրական տնտեսություն, ստացած մթերքների հաշվին բացել ուսանողական ճաշարան, կոլեկտիվն ապահովել վառելիքով և առաջին անհրաժեշտ կենսամիջոցներով:

1946թ. շրջանավարտ Գուրգեն Պողոսյանը հիշատակում է. «Հետպատերազմյան տարիներին սովն ալեկոծվում էր Ղարաբաղում, հատկապես՝ Շուշիում: Մենք՝ Ղարաբաղի տարբեր ծայրերից հավաքվածներս, մեկս՝ որք, մյուսը՝ տկլոր, այս կրթօջախում վառեցինք հավատի մոմը: Ուսումնասիրության տարիներին մենք հազեցրինք ոչ միայն մի կտոր հացի կարտոն, այլև ուսման ծախսը: Այդ տարիներին ձևավորվեց նաև մեր ազգային ինքնագիտակցությունը»:

Ճանաչված մանկավարժը և հայրենասերը հարազատ երկրամասի կյանքում ունեցած անուրանալի վաստակի համար պարգևատրվել է երկու տասնյակից ավելի շքանշաններով, մեդալներով և պատվոգրերով: Իր մահկանացուն կնքել է 1988թ. մարտի 10-ին Շուշի քաղաքում:

Պատահական չէ, որ 2001թ. փետրվարին, նրա ծննդյան 90-ամյակի կապակցությամբ, Շուշիի հումանիտար ուսումնարանը վերանվանվել է իր ուսուցչապետի անունով:

Վաստակաշատ մանկավարժի ուսանելի կյանքի մասին փաստագրական համառոտակի տվյալները ներկայացվել են Դավթյանի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ», Ալբերտ Խաչատրյանի «Հավերժի ճանփորդը»,

«Շուշիի մանկավարժական ուսումնարան» աշխատություններում և այլ հոդվածներում:

Շուշիի՝ Ա.Խաչատրյանի անունը կրող կրթօջախի համար նույնիսկ 20-ը նշանակվից էր և հիշարժան: Նրա տարեգրության էջերում վառ կմնա օրվա խորհուրդը: Քոլեջը նշեց 20-րդ դարի լավագույն մանկավարժ Արսեն Խաչատրյանի հարթաքանդակի բացման արարողությունը, որի հեղինակն է քանդակագործ Յուրի Յովհաննիսյանը: Հանդիսավոր բացմանը ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարար Սևակ Ասրյանը, ՄԵ հարցերի փոխնախարար Լ.Հովհաննիսյանը, Շուշիի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Մ.Խաչատրյանը, հասարակական ու քաղաքական

արհեստավարժ դասախոսների մի աստղաբույլ, որը պատվով իրականացրեց իր սուրբ առաքելությունը՝ թողարկելով համակողմանի զարգացած մասնագետներ, ովքեր իրենց հետ կյանք են տարել կրթօջախում ստացած գիտելիքներն ու լավագույն ավանդույթները, դարձել նշանավոր, անվանի մարդիկ՝ գիտնականներ, գրողներ, պատմաբաններ, վաստակաշատ մանկավարժներ, մշակույթի առաջավոր աշխատողներ, հայրենիքի պաշտպաններ: Այսօր էլ մեր իրականության ամենատարբեր ոլորտներում իրենց արգասաբեր գործունեությունն են ծավալում նրա շրջանավարտները և փերով հիշում իրենց ուսուցչապետին ու տնօրենին: Աշխատանք

ին:

Օրվան նվիրված խոսք ասաց նախարար Ս.Ասրյանը.

- Այսօրվա խորհուրդն իրոք ոգևորիչ է հատկապես նոր սերնդի համար, ովքեր, ուսումնասիրելով և գիտակցելով Ա.Խաչատրյանի ներդրումը ընդհանուր կրթական ոլորտի զարգացման գործում, իրենք էլ կանեն ամեն ինչ՝ պահպանելու, ստեղծելու և զարգացնելու այն նորն ու լավը, որն անհրաժեշտ է այսօրվա մեր հասարակության զարգացման համար:

Ա.Խաչատրյանի անցած ճանապարհը համառ ու քրտնաջան աշխատանքի, որոնումների երկար ու ձիգ տարիների հանրագումար է՝ լի ստեղծագործական ավյունով ու բերկրալի պահերով:

Իր արգասավոր գործունեությամբ և հարուստ փորձով ու մտաբանությամբ նրա մեծ ներդրումն էր աշխատանքի մեթոդաբանությանը՝ Ա.Խաչատրյանը, հակապատկառու ավանդ ունի Արցախի դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման պատմության անդաստանում: Եվ հիմա, երբ ազատագրված է Շուշին, գիտակցում ենք այն գործի մեծությունը, որը ձեռնարկել և իրականացրել է Ա.Խաչատրյանը:

Քոլեջի նախկին շրջանավարտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԱՊՀ դասախոս Համլետ Գրիգորյանն իր ելույթում ևս բարձր գնահատեց Ա.Խաչատրյանի գործունեությունը: Կրթօջախի տնօրեն Արա Հայրապետյանը նշեց, որ այսօր Ա.Խաչատրյանի նախաձեռնած ճանապարհով քոլեջի ոգևորված մեթոդները և մտնում նրա երազած գալիքի սերունդը:

- Վստահ եմ, որ այդ սերունդը կլինի արժանի հետևորդը Արցախ աշխարհի այս հինավուրց կրթարանի լավագույն ավանդների: Հպարտ ենք, որ քոլեջը կրում է վաստակաշատ մանկավարժ Ա.Խաչատրյանի անունը: Անուս, որ կհարատևի գալիքի ճանապարհին կանգնած նորօրյա Շուշիի կրթօջախի երազուն ձգտումների, պայծառ սպասելիքների հետ:

Ամենամեծ հիշատակը, որ կարող ենք տալ Ա.Խաչատրյանին, հենց իր անունը կրող ուսումնական հաստատության հզորացումն ու առաջընթացն է:

Համոզված եմ, որ այդ կրթօջախը, որը նաև նախկին Ռեալական ուսումնարանի իրավահաջորդն է, և որի արմատները հին են այնքան, միշտ կունենա իր նորահունչ խոսքն ու անելիքը նաև նոր ժամանակներում, - ասաց Ա.Հայրապետյանը:

Միջոցառումն ընթացավ կրթօջախի ասմունքի, երգի ու պարի և ժողգործիքների ինքնագործ խմբերի սաների զեղեցիկ կատարումներով:

Ալիսա ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՎՈՅԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՈՒՅՆ ՄԵՐ ՄԵՋ Է

Այսօր հայոց ազգային դպրոցի դաստիարակության բարդ ու համալիր գործընթացում հասկանալի օրինաչափությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը:

Հայրենասիրությունը ոչ թե բառերով, այլ հայրենիքը ճանաչելով և նրա համար անձնվեր գործեր կատարելով է դրսևորվում: Հայրենասիրության վառ, կենդանի օրինակ է բուրդի ցույց տվել Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի լեգենդ, ազգային հերոս, հմուտ ռազմավարագետ Մոնթե-Ալո Մելքոնյանը, ում կյանքն ու գործունեությունը դարեր շարունակ պետք է բոցավառեն սերունդներին ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ, մղեն նրանց՝ անմնացորդ նվիրումով ծառայելու ազգին, հայրենիքին:

Աշակերտների մեջ հայրենասիրական վեհ գաղափարներ ներարկելու և ամրապնդելու նպատակով Ստեփանակերտի հ.5 դպրոցում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ:

Այդ նպատակին ծառայեց հերոսի ծննդյան օրը՝ նոյեմբերի 25-ին, դպրոցի մի խումբ ուսուցիչների և աշակերտների այցը ք.Մարտունի:

Ճանապարհամերձ ծառերը՝ ծյան ծանրությունից խոնարհված, ասես, իրենց խնկարկուն են անում մեծն հերոսին ու մեզ բարի ճանապարհի մաղթում:

Մեքենան շարժվում է առաջ, իսկ մենք վայելում ենք ժամանակից շուտ իր իրավունքների մեջ մտած արցախյան ծնեթը: Մեքենայում տիրող լռությունը խախտեց Լյուսյա Հարությունյանը.

- Սիրելի՛ երեխաներ, այս ճանապարհը, տեղանքը, ժայռերը ինձ գցեցին իմ հիշողության գիրկը...

Հավանաբար Լ. Հարությունյանը վերապրեց պատերազմական քրոնիկոնը և աշակերտներին պատմեց, թե ինչպես էին պատերազմի ժամանակ մարդիկ քաղաքից գյուղ էին հասնում ոտքով՝ հաղթահարելով դժվարություններ, ամեն անհնարին դարձնում հնարավոր... Իսկ աշակերտներն ուշի-ուշով լսում էին ու հարցեր տալիս: Սկսվեց աշխույժ երկխոսություն՝ հայրենասիրական թեմայով:

- Մարտակերտ բուրբերը կարողացել են ներխուժել, իհարկե, մերոց նորից ազատագրել են, սակայն Մարտունին անասան էր, կարողացավ դիմադրել յոթ գլխանի հրեշից, - ասաց հարցասեր Անդրեյը:

- Մարտունու պաշտպանությունը կազմակերպում էր Ավոն, դրա համար թշնամին արժանի հակահարված ստացավ, - լրացրեց Նորայրը:

Ահա հերոսի հուշարձանը՝ հպարտորեն կանգնած քաղաքի հրապարակում: Կարծես այդտեղից նա հետևում է դիրքերին ու իր խորհուրդները տալիս սահմանի կանգնած զինվորներին...

Տեղացող ծյունախառն անձրևը չխանգարեց աշակերտներին՝ իրենց սրտի խոսքն ասելու հայրենաշունչ բանաստեղծություններով ու հայրենասիրական երգերով:

*Կռվում չամիչ չեն բաժանում,  
Կռվում զնդակներ են պարում,  
Մահը կռվում քե՛ք է անում,  
Չի կշտանում, չի ալարում:  
Ա.Խաչատրյան*

Այո՛, քաջ իմանալով, որ կռվում չամիչ չեն բաժանում, ազգիս հերոսը դեռևս օվկիանոսից այն կողմ քաջ գիտակցելով, որ «եթե կորցնեմ Արցախը, կշոջեմ հայոց պատմության վերջին էջը», առանց վարանելու հայտնվում է հայրենիքում:

*Ազատությունը յոթ տասնյակ տարի,  
Կեղծիքի ծխից մաշվել է արդեն,  
Հիմա Արցախը ելել է արի,  
Եվ շղթաները ուզում է ջարդել:  
-Իմ տեղն այնտեղ է,-Մոնթեն է ասում...*

Ա.Խաչատրյան

Հերոսի հուշարձանի մոտ աշակերտները երգվեցին լավ սովորել, սիրել հայրենիքը, ժամանակին մասնակցել հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

- Եվ եթե, Աստված մի արասցե, մեր դարավոր թշնամին նորից փորձի խոնձորություն կատարել, մենք անշուշտ կհետևենք լեգենդար հերոս Ավոյի օրինակին, - միաձայն հնչեցին աշակերտների շուրթերից:

Թո՛ղ խաղաղությունն ու անկախությունը թագավորեն հայրենի Արցախ աշխարհում:

Թո՛ղ մեր մանուկները արարեն ու ստեղծագործեն խաղաղ երկնականարի ներքո:

Թո՛ղ ոչ մի մանուկ չապրի պատերազմի ահն ու սարսափը:

Եվ թո՛ղ հայ ժողովուրդը հաղթանակներ ձուլի ոչ մարտադաշտում, այլ սպորտի, արվեստի, մշակույթի և այլ բնագավառներում:

Տա՛ր Աստված:  
Միջոցառումը մեկ անգամ ևս փաստեց, որ, հիրավի, Ավոյի հերոսական ոգին մեր մեջ է:

Մարինե ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Սյրեհ.Հ.Բալասանյանի անվան հ.5  
հիմնական դպրոցի ՄՎԱԳՏՏ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2013-2014 ՈՒՍԱՐԿԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



2013-2014 ուսումնական տարում ունեցել ենք ինչպես հաջողություններ, ձեռքբերումներ, այնպես էլ թերացումներ ու բացթողումներ: Ներկայացնեն կատարածը՝ կանգ առնելով վրիպումների ու թերությունների, դրանց վերացման ուղղությունների նախանշման վրա: 2013-2014 ուսումնական տարում շրջանում գործել են 32 հանրակրթական դպրոցներ, որից 24-ը՝ միջնակարգ, 8-ը՝ հիմնական: Մասնաճյուղ դպրոցներ են գործել: Նախընտանիքի մ/դ-ին կից Սառնաղբյուրի, Խրամորթի մ/դ-ին կից՝ Արմենակալանի և Փառուխի, Խնձորիստանի մ/դ-ին կից՝ Հիլիսի, Ակնաղբյուրի մ/դ-ին կից՝ Զրաղացների, Մադաթաշենի հիմնական դպրոցի կից Մոշիսիանի համայնքներում:

Հանրակրթական դպրոցներ են հանձնվել 2258 աշակերտներ (30-ով ավելի է անցած ուստարուց)՝ 277 դասարան-լրակազմով, 363 դասարանով: Տղա-աղջիկ հարաբերակցությունը կազմել է 1108:1150: Աշակերտական կազմի ստորին և վերին սահմանը կազմում է՝ -առաջին դասարանցիներ -247 -9-րդ դասարանցիներ - 147 -12-րդ դասարանցիներ - 97 Նշեն, որ նման նվազ քանակով շրջանավարտներ վերջին 5 տարվա կտրվածքով չենք ունեցել:

Ուստարվա ընթացքում սովորողների շարժի պատկերն այսպիսին է՝ դպրոցներ են ընդունվել 19, դպրոցներից դուրս են եկել 36 աշակերտներ: Ուստարվա վերջին աշակերտների թիվը կազմել է 2241: Համեմատության համար ասեն, որ 2012-2013 ուստարում աշակերտների թիվը տարեկան 2228, տարեվերջին՝ 2227 աշակերտ էր: 6 աշակերտներ մնացել են նույն դասարանում՝ դասընթացը կրկնելու: 20 աշակերտներ ստացել են ամառային առաջադրանքներ, որից 6-ը՝ 9-րդ դասարանցիներ: Նախորդ ուստարում ամառային առաջադրանքներ էին ստացել 40 աշակերտներ: ԼՂՀ ԳՊԿ կողմից հաստատված աշխատացույցի համաձայն՝ 9-րդ դասարանների 6 աշակերտներ օգոստոսի 20-30-ը վերաբնութային են հանձնել և քննակազմի դրական գնահատականների արդյունքներով ստացել հիմնական կրթության վկայականներ: Ընդհանուր առմամբ, հիմնական կրթության վկայական ստացել են 147 9-րդ դասարանցիներ:

Շարունակվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցահասակ երեխաների գնահատումները, որոնց արդյունքներով ուստարում ուսումնասիրվել է նախկինում գնահատված 62 աշակերտներ, որոնց մոտ ծնողների, ուսուցիչների կողմից նկատվել են տարբեր շեղումներ (տեսողական, խոսքի և վարքի խանգարումներ): Նման երեխաների կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովումը (սնունդ, թեթևացված ծրագրային պահանջներ) և համատեղ ուսուցումը հանրակրթական դպրոցներում, վկայում են նրանց շահերի, հավասարազոր իրավունքների պաշտպանության մասին:

հավասարազոր իրավունքների պաշտպանության մասին: Շրջանում սովորողների կրթության և դաստիարակության գործնականացումն են 674 ուսուցիչներ, որոնցից 653-ը՝ բարձրագույն, 21-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ: Սպասարկման աշխատանքներն իրականացնում են 314 հիմնական և սեզոնային աշխատողներ:

Աշխատող ուսուցիչներից 113-ը արական սեռի է, 561-ը՝ իգական: Դասաժամերի ընդհանուր թիվը՝ 9174: Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը հաշվետու տարում կազմել է 13,6 դասաժամ: Առանձին առարկաներից ուսուցիչների կուտակումներ կան՝ մաթեմատիկայից, ֆիզիկայից՝ Շոշուն, Սարուշենում, հայոց լեզու և գրականությունից, դասվարներ՝ Ավետարանոցում և Իվանյանում, կենսաբանությունից՝ Խրամորթում:

Շրջանի դպրոցների մանկավարժական կարգերի պահանջարկը հիմնականում լուծված է: Առաջընդվելով ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանով՝ մասնագետների պահանջարկ առաջանալու դեպքում, թափուր տեղի համար դաստարարվում է մրցույթ: 2014-2015 ուստարվա ուսուցչի թափուր տեղերի հայտարարություն է տրված: Ակնաղբյուրի, Սղմախի, Դահրավի, Խանջի կրթական հաստատությունների համար՝ օտար լեզու, Խրամորթի և Պատարայի՝ ֆիզիկա, Դահրավի՝ պատմություն, Խանջի՝ քիմիա, կենսաբանություն առարկաների ուսուցչների թափուր տեղերի համար:

Հաշվետու տարում շրջանում գործել է Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ 36 խմբակով, 380 սաների, երաժշտական դպրոց՝ 10 խմբակով 112 աշակերտների, մանկապատանեկան մարզադպրոց՝ 18 խմբակով, 251 աշակերտների, Աստղաշենի արվեստի դպրոց՝ 12 խմբակով, 88 աշակերտների ընդգրկմամբ:

Հայտնի է, որ ի շահ անհատի, հասարակության և պետության՝ անգնահատելի է նախադպրոցական ուսումնական հաստատության դերը: Համագործակցելով ընտանիքի հետ՝ այն ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, լուծում ծնողների զբաղվածության հետ կապված բազմաթիվ հարցեր: Այսօր պետական նախադպրոցական հիմնարկի կարգավիճակ ունեն Այգեստանի, Ավետարանոցի, Ակնաղբյուրի, Խնձորիստանի, Խաչենի մանկապարտեզները, իսկ Ասկերանի և Խնձորիստանի հիմնարկները գործում են Ավետարանական և ՀՕՍ բարեգործական ընկերությունների հովանավորությամբ:

2015 թ. կավարտվի Ավետարանոցի մանկապարտեզի շենքի շինարարությունը, և 50 նախադպրոցականներ վերջապես կունենան հարմարավետ, ժամանակակից պահանջներին համապատասխան մանկական հիմնարկ: Ֆրանսահայ բարերարների միջոցներով, ժամանակակից պահանջներին համահունչ, մանկապարտեզի շենք է կառավարվել Հարավ համայնքում: Նախապատրաստական խմբեր են գործում Խրամորթի, Նորագյուղի, Պատարայի, Իվանյանի, Ասկերանի կրթական հաստատություններում: Նախադպրոցական հիմնարկներ ունենալու անհրաժեշտություն է առաջացել:

Նորագյուղում, որտեղ կան 121, Պատարայում՝ 60, Իվանյանում՝ 135, Աստղաշենում՝ 35, Շոշուն՝ 55 նախադպրոցական տարիքի երե-

խաներ: Միաժամանակ նշեն, որ հովանավորչական մանկապարտեզներում գործող շենքերն չեն փակում ծնողների շահերից: Երկարատև արձակուրդները, ամառային շրջանում հիմնարկների ժամանակավոր փակումը առաջացնում են ծնողների դժգոհությունը: Հուլիս ամսում ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից ձևավորված հանձնաժողովը ստուգել է շրջանի Խաչենի պետական և Խնձորիստանի «Սոսե» մանկապարտեզները և աշխատանքները գնահատել բավարար:

Բարեփոխումների ներկա փուլում կրթության զարգացման որևէ ծրագիր չի կարող ինքնապատակ լինել, այն ունի իր առաքելությունը: Կրթությունն այսօր հայերիս համար անվտանգության խնդիր է: Արցախի դպրոցականը պետք է լուրջ ուշադրություն դարձնի ազգային-պետական մտածողության ու գործելակերպին և ձգտի ձեռք բերել նման մտածողություն, աշխատի շարունակական կրթության ձեռքբերման ուղղությամբ: Կրթական բարեփոխումներն առաջադրում են ուսուցման նոր մեթոդների կիրառում, քանի որ առանց այդ բարեփոխումների հնարավոր չէ զարգացում ապահովել:

Հաշվետու ուստարվա ընթացքում համընդհանուր տեսչական ստուգումներ են անցկացվել Իվանյանի, Քոսանու միջնակարգ և Հովսեփավանի հիմնական դպրոցներում: Իսկ թեմատիկ ստուգումներ՝ Հարավի և Ակնաղբյուրի դպրոցներում: 2014-2015 ուստարում համակողմանի ստուգումներ կանցկացվեն Ավետարանոցի, Սղմախի, Հարավի, Աստղաշենի կրթական հաստատություններում:

Տեսչությունը, կարևորելով կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը, ստուգումները դարձրել է նպատակային և արդյունավետ: Համակողմանի ստուգումների նպատակն է պարզել կրթական ծրագրերի յուրացման աստիճանը, կրթության որակը, պետական կրթական չափորոշիչների պահանջների ապահովումը և աջակցել վերոնշյալ գործընթացների արդյունավետ և որակյալ կազմակերպմանը, բացահայտված խախտումների սխալների, թերությունների վերացմանը, աշխատանքներում մեթոդական օգնություն ցուցաբերելուն:

Հանձնախմբի երկակցությամբ՝ տեսչավորված թուլոր դպրոցների արդյունքները գնահատվել են բավարար: Տեսչական ստուգումները ցույց են տվել, որ Իվանյանի մ/դ տնօրինության կողմից որոշակի աշխատանքներ են կատարվել ներդպրոցական վերահսկողության բարելավման ուղղությամբ: Ինչպես բաշխված պաշտոնական պարտականությունները տեղակալների և պատասխանատու մյուս աշխատողների միջև: Դպրոցի տնօրենի, տեղակալների, մեթոդավարիների նախագահների կողմից կատարված դասալուծումների վիճակագրությունը վկայում է, որ բավարար դրական տեղաշարժ է գրանցվել ներդպրոցական վերահսկողության իրականացման ուղղությամբ: Դպրոցում որոշակի դրական քայլեր են կատարվել նաև մեթոդական աշխատանքների բարելավման ուղղությամբ, որոնք այս կամ այն ձևով նպաստել են ուսուցիչների մեթոդամանկավարժական, մասնագիտական որակավորման բարձրացմանը:

Քոսանու միջնակարգ դպրոցի եռօրյա տեսչական ստուգումների ընթացքում պարզել են, որ դպրոցում ապահովված է ուսումնական աշխատանքների բավարար մակարդակ, պարապմունքներն ընթա-

նում են բնականոն ռեժիմով, որոշակի հաջողություններ ունի դպրոցը առարկայական օլիմպիադաներում, աշակերտների գիտակցական կարգապահությունը բարձր է:

Հովսեփավանի հ/դ-ի մանկավարժական կոլեկտիվը իր գիտելիքների, մեթոդական և մասնագիտական պատրաստակամության շրջանակներում փորձում է ապահովել սովորողների կրթության և դաստիարակության գործի բավարար մակարդակ, ձգտում է դասավանդման ընթացքում օգտագործել նոր մեթոդներ ու հնարներ: Սակայն վերոնշյալ դպրոցներում նկատվել է, որ մանկատանի քննարկումները անց են կացվում խիստ ձևականորեն, որոշումները բաղկացած են մեկ կետից, արտահայտվողներ չեն լինում, այն կրում է ինքնանպատակ բնույթ: Նման ձևի քննարկումները չեն կարող տալ դրական արդյունք, չեն կարող նպաստել առարկայի դասավանդման որակի բարելավմանը, ուսուցման որակի բարձրացմանը:

Հանձնարարականներ են տրվել մանկավարժներին՝ ճիշտ եզրահանգումներ անել ստուգումների արդյունքներից, դասերին ներկայանալ պատրաստ, գիտակցումով, ընդունել այն պահանջը, որ ցանկացած աշխատանք գնահատվելու է վերջնական արդյունքով: Տեսչությունը կոնկրետ ժամկետներ է նշել վերոնշյալ ստուգված դպրոցներում թերությունները վերացնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում շրջվարչակազմի կրթության բաժինը աշխատանքներ է տարել դպրոցներում ներքին կարգապահական կանոնները աշխատողների, այդ թվում՝ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի աշխատանքային պայմանագրերի կարգավորումը, աշխատանքների կատարման ժամանակացույցները կարգավորելու ուղղությամբ:

Ուստարվա ավարտին ԼՂՀ ԿԳՍ պետական տեսչության և կրթության բաժնի կողմից ուսումնասիրվել են դասալուծումների քանակը և որակը: Այդ հարցը վերլուծվել է նաև «Լուսարար» պաշտոնաթերթում՝ ԼՂՀ ԿԳՍ տեսչության պետ Ս.Արզումանյանի կողմից:

23 դպրոցների տնօրենների և 30 փոխտնօրենների աշխատանքներն այդ ուղղությամբ գնահատվել է «ավել», իսկ 13 տնօրենների և 7 փոխտնօրենների աշխատանքները՝ «բավարար», մեկ տնօրենի աշխատանք չի գնահատվել հիվանդության պատճառով: Կարևորելով դպրոցի ղեկավարի դերը՝ պետք է նշեն, որ շրջանի մի շարք կրթական հաստատությունների տնօրեններ՝ Ժ.Սարգսյան (Ակնաղբյուրի մ/դ), Զ.Բեգլարյան (Խնձորիստանի մ/դ), Է.Վարդանյան (Նորագյուղի մ/դ), Հ. Հարությունյան (Շոշի մ/դ), Գ.Արզումանյան (Խնձորիստանի մ/դ), Ս.Գասպարյան (Սարուշենի մ/դ), Ս.Գրիգորյան (Աստղաշենի մ/դ), Կ.Մայիսյան (Ասկերանի մ.դ.), Ս.Սմանյանյան (Խաչենի մ.դ.) իրենց դրսևորել են որպես շրջանի կրթական համակարգի լիարժեք ղեկավարներ՝ որակական անհրաժեշտ մակարդակով, ստեղծագործական մեծ ներուժով, նորամտություններին արագ արձագանքելու, կրթական ծառայությունների առանձնահատկությունները վերլուծելու կարողությամբ:

ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից իրականացվող բարեփոխումների հետևողական գործընթացները՝ համակողմանի ստուգումներ, վերապատրաստման դասընթացների կազմակերպում և ատեստավորման գործընթաց, կնպաստեն

դպրոցի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Մարտ ամսում կազմակերպված վերապատրաստման դասընթացները, որոնց մասնակցեցին շրջանի դպրոցների առարկայական 106 մասնավարժներ, մեծապես նպաստել են մասնագիտական գիտելիքների ամրապնդմանը, մեթոդական շատ հարցերի պարզաբանմանը: Մասնակցեցին կոլեկտիվի կրթության և դաստիարակության բաժնի գործընթացների փորձը արդյունավետության, կազմակերպչական հարցերի վերաբերյալ:

ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանով՝ ձևավորվել է Ասկերանի շրջանի ուսուցիչների ատեստավորման հանձնաժողով՝ նախարարության կրթության վարչության պետ Ռ.Սուսայեթյանի նախագահությամբ: Հանձնաժողովը օգոստոսի 21-24-ը ներառյալ ապահովել է կրթական հաստատությունների ուսուցիչների ատեստավորումը: Հանձնաժողովը աշխատել է անաչառ, օբյեկտիվ, մանրամասնորեն ուսումնասիրել է յուրաքանչյուր ուսուցչին տրված բնութագրերը, համընդհանուր ստուգման գնահատականը և կատարել անհրաժեշտ հետևություններ: Հանձնաժողովը միաժամանակ նշել է, որ առանձին տնօրեններ իրենց գնահատականներում ցուցաբերել են ոչ սկզբունքայինություն, տրված բնութագրերը իրենց շրայությամբ գերազանցում են մեկը մյուսին: Ժամանակն է, որ կարողանանք միջկողմով, պատասխանատվությամբ, մասնագիտական խորը կարողություններով օժտված ուսուցիչը տարբերակել անկարող, իներտ ու թույլ կարողություններով ուսուցիչի:

Սովորողների շրջանում առանձնահատուկ նշանակություն և դեր ունի ավանդական առարկայական օլիմպիադաների կազմակերպումը: Օլիմպիադան կազմակերպվել է 3 փուլով՝ ներդպրոցական, շրջանային և հանրապետական: Շրջանային փուլը կազմակերպվել է 2014թ. փետրվարի 12-14-ը: Օլիմպիադանի մասնակցելու հայտ են ներկայացրել 254 աշակերտ: Մասնակցել են 22 միջնակարգ դպրոցների և 1 հիմնական դպրոցների հիմնականում 9-12-րդ դասարանների աշակերտներ, իսկ 11-ը՝ 7-8-րդ դասարանների աշակերտներ: Օլիմպիադան կազմակերպվել է ուսումնական 12 առարկաներից, ցավոք, ինֆորմատիկայից հայտատուները չէկային: Օլիմպիադայի մասնակից 7-րդ դասարանի 2 աշակերտներ՝ Իվանյանի և Խաչենի միջնակարգ դպրոցներից, ինչպես նաև Ակնաղբյուրի մ/դ 8-րդ դասարանի 1 աշակերտ հավաքել են բարձր միավորներ: Հանրապետական փուլին մասնակցել են 41 դպրոցականներ, որոնցից մրցանակային տեղեր են գրավեցրել և առաջին կարգի մրցանակ ու 30 հազ. դրամ ստացել Խաչենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Էլլա-րա Հայրապետյանը (ուսուցչուհի՝ Աննա Ձիվանջիդյան) պատմություն առարկայից, 3-րդ կարգի մրցանակի և 20000-ական դրամով են պարգևատրվել՝ Խնձորիստանի մ/դ 12-րդ դասարանի աշակերտուհի Անահիտ Շահրամանյանը (ուսուցչուհի՝ Սուրբա-յա Ղազարյան)՝ հայոց լեզու, Խաչենի մ/դ 7-րդ դասարանի աշակերտուհի Գրիգորյանը (ուսուցչուհի՝ Արև Յարյան)՝ հայ եկեղեցու պատմություն, Ավետարանոցի մ/դ 10-րդ դասարանի աշակերտուհի Անիտա Սարգսյանը (ուսուցչուհի՝ Սիլվա Աշխարի-յան)՝ աշխարհագրություն, Խնձորիստանի մ/դ 10-րդ դասարանի աշակերտ Հայկ Մայիսյանը (ուսուցչուհի՝ Մանգասարյան)՝ հայ եկեղեցու պատմություն առարկա- ներից:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՍԿԵՐԱՆԻ ՀՐԶԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2013-2014 ՈՒՍԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5 Ակտիվ մասնակցության համար պարգևատրվել են 12 աշակերտներ հնապատի, Ասկերանի, Նորագյուղի, Այգեստանի, Պատարայի, Ավետարանցի և Խաչենի միջնակարգ դպրոցներից:

Օլիմպիադայի եզրափակիչ փուլի արդյունքներով դիպլոմների և պատվոգրերի արժանացած 4 աշակերտների՝ Քնար Պետրոսյան (Ասկերանի մ/դ, ուս.՝ Մարելա Ավանեսյան), Յուրա Մարգարյան (Խաչենի մ/դ, ուս.՝ Արև Գրիգորյան), Արեն Ավագյան (Պատարայի մ/դ, ուս.՝ Ծովինար Արզումանյան), Էլլարա Չարապետյան (Խաչենի մ/դ, ուս.՝ Աննա Ջիվանչիրյան) ընդունել է հանրապետության Նախագահը, արժանացրել բարձր պարգևների:

Շնորհակալություն հայտնենք և շնորհավորենք հաղթողներին, նրանց ուսուցիչներին, դպրոցի տնօրեններին, ովքեր անմնացորդ նվիրումով աշխատել և ապահովել են հաջողություն:

Օլիմպիադայի արդյունքները քննարկվել են տնօրենների ընդլայնված խորհրդակցությունում, և նշվել է, որ իր հնարավորություններից ցածր մակարդակով են հանդես եկել Աստղաշենի, Խնձրիստանի, Խրամորթի, Կարմիր գյուղի, Ազնեքի, Ծաղկաշատի մ/դ և բոլոր հիմնական դպրոցների աշակերտները, այն դեպքում, երբ նշված դպրոցներում աշխատում են իրենց մասնագիտությունների գիտակ, փորձառու ուսուցիչներ:

Ուսումնական տարվա վերջին, օլիմպիադայի և ավարտական քննությունների արդյունքների վերլուծությանը և քննարկմանը մասնակցել է շրջվարչակազմի ղեկավար Ս. Գրիգորյանը: Իր շնորհակալական խոսքն ուղղելով օլիմպիադայում բարձր միավորներ վաստակած մանկավարժական կոլեկտիվներին՝ նա միաժամանակ իր դժգոհությունն է հայտնել այն կոլեկտիվների աշխատանքային գործունեությունից, ովքեր հետևողականորեն չեն աշխատում ուսման որակի, արդյունավետության ուղղությամբ, չեն ապահովում օլիմպիադայում բարձր միավորներ վաստակելու հնարավորությունը և հետևողական աշխատանքը:

Վերոնշյալ դպրոցները կրթության չափորոշիչների պահանջների, ուսումնադաստիարակչական գործընթացի որակի չափահավելը, առարկայական օլիմպիադաներում արդյունքներ չարձանագրելը, արտադպրոցական միջոցառումներին չմասնակցելու փաստը հիմք են ստեղծել քննարկման թեմա դարձնել տնօրենների կադրային անհամապատասխանության հարցը:

Վերոնշյալը բոլորիս զգաստացնելու, սթափ կողմնորոշվելու, զալիք սերնդի ճակատագիրը կանխորոշելու ուղենիշ է, մեր պետականության ամրապնդման, նոր ձեռքբերումների խթան:

Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժինը աշխատանքներ է տարել ավարտական՝ 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտների, համապատասխանաբար, 147 և 97 շրջանավարտների քննությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ: Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու ուստարում ձևավորվել է 4 քննակենտրոն՝ Ասկերանի, Նորագյուղի, Այգեստանի, Շոշի դպրոցներում: 12-րդ դասարանների 97 շրջանավարտներից 60-ը մասնակցել են միասնական քննություններին:

Հայոց լեզվից բարձր միավորներ են վաստակել Խնապատի, Նորագյուղի, Ասկերանի, Այգեստանի և Խաչենի, մաթեմատիկայից՝ Խնապատի դպրոցականները, ֆիզիկայից՝ Խնապատի և Նորագյուղի դպրոցականները՝ առավելագույնը՝ 13 միավոր, անգլերենից՝ Նորագյուղի, Ասկերանի, Այգեստանի, հայոց պատմությունից՝ Խաչենի, Ասկերանի, Նորագյուղի դպրոցականները:

Սակայն կենսաբանությունից դիմած 5 մասնակիցներն էլ ստացել են «անբավարար»:

Պետական ավարտական քննություններից «անբավարար» ստացած 10 աշակերտներ հուլիսի 3-7-ը ժամանակահատվածում հանձնել են վերաքննություններ և ստացել ավարտական ատեստատ: Միասնական քննությունների արդյունքով «անբավարար» են ստացել 21 աշակերտներ, որից 7-ը՝ երկու առարկայից:

Ընդհանրացնելով արդյունքները՝ հանրապետության և հանրապետությունից դուրս

բուհերում ընդունվածների թիվը հետևյալ պատկերն ունի՝

- ԱրՊՀ - 47 (առկա և հեռակա բաժիններ)
- Ազրարային համալսարան -13
- «Մեսրոպ Մաշտոց» և «Գրիգոր Նարեկացի» համալսարաններ - 4
- Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտ (ռեժիսորական) - 1
- Երևանի պետական համալսարան -1
- Կիրառական արվեստի ինստիտուտ -1
- Բժշկական քոլեջ -3
- Երաժշտական քոլեջ -1
- ՊԲ-ում ծառայության է անցել -1
- Արհեստագործական ուսումնարան -1
- Չեն տվորում -14

Ավելացնենք, որ անվճար հիմունքներով ԱրՊՀ են ընդունվել. Նորագյուղից՝ 8, Խնապատից՝ 6, Ասկերանից՝ 4 շրջանավարտներ: Պետք է նշել, որ 9-րդ դասարանների շրջանավարտներից չունենք գերազանցության նմուշ վկայական ստացողներ, էլ չեն խոսում մեղալի հավակնորդների մասին: Սա լուրջ մտահոգության տեղիք է տալիս:

Հայտնի է, որ ուսումնական հաստատության գործունեության արտաքին գնահատումն իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Արտաքին գնահատումը բացահայտում է ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ առանձին առարկաների յուրաքանչյուր մակարդակը: Այդ առումով ԼՂՀ ԳԹԿ-ի կողմից բավականին աշխատանքներ են տարվել ուսումնական, ինչպես ավագ դպրոցի, այնպես էլ միջին օղակի սովորողների գիտելիքների մակարդակի բացահայտման ուղղությամբ:

Ավարտական քննությունների արդյունքներին զուգահեռ ցանկանում են որոշակի տվյալներ ներկայացնել ԳԹԿ-ի կողմից տարվա ընթացքում անցկացված փորձնական քննությունների և արտաքին ստուգումների արդյունքներին մասին:

2013թ. դեկտեմբերի 4-ին ԳԹԿ-ի կողմից կազմված թեստերով շրջանի հանրակրթական ուսումնական հաստատություններում անց են կացվել արտաքին ընթացիկ գնահատումներ բոլոր դպրոցների 4-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարաններում՝ տարբեր առարկաներից, ընդգրկված էր նաև 2 մասնաճյուղ դպրոց:

Աշակերտների ընդհանուր թվից՝ 2258, գնահատումներին մասնակցել են 705 կամ 31 տոկոսը, իսկ տվյալ դասարանների (4-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ) աշակերտների՝ 93%: Գրավոր աշխատանքներից բացակայել են 52 աշակերտներ: Գնահատվածների 24% կամ 167 -ը ստացել է «անբավարար», որից՝

- կրտսեր օղակում՝ 35
- միջին օղակում՝ 97
- ավագ դպրոցում՝ 35 հոգի

Գրավոր աշխատանքների վերլուծություններից պարզվել է, որ «անբավարար» գնահատականները գերակշռել են անգլերեն, ֆիզիկա, քիմիա առարկաներից:

Անգլերենի գրավոր աշխատանքին մասնակցած 61 աշակերտից «անբավարար» է ստացել 33-ը, ֆիզիկայից՝ 36-ից՝ 19-ը, քիմիայից՝ 56-ից՝ 25-ը:

Գնահատվածներից 21-ը կամ 3 տոկոսը ստացել են բարձր միավորներ (9, 10), մախորդ ուստարում այն կազմել է 5,7%, իսկ մասնակիցներից 517-ը կամ 73 % ստացել է 4-8 միավոր:

Իսկ 2014թ. մարտի 3-ին անցկացրած 2-րդ ընթացիկ ստուգման համար ընտրվել են միջին օղակի 5-րդ և 7-րդ և ավագ դպրոցի 10-րդ դասարանները:

Այս անգամ գնահատումներին մասնակցել են աշակերտների ընդհանուր թվի 26 տոկոսը կամ 590-ը, կամ տվյալ դասարանների 614 աշակերտների 96 տոկոսը: Բացակայությունների թիվը բավականին նվազել է: Այս անգամ «անբավարար» են ստացել 169 աշակերտներ կամ մասնակիցների 29%, որից 118-ը՝ միջին օղակում, 51-ը՝ ավագ:

Արտաքին ընթացիկ ստուգումներն ավելի ակնառու են դարձնում սովորողների գիտելիքների մակարդակն ու իմացությունը, ինչպես նաև վստահություն է դրսևորվում մանկավարժական կոլեկտիվների հանդեպ՝ օբյեկտիվ անցկացնելու ստուգումները:

Սովորողների նախասիրությունների ուղղորդման, ազատ ժամանցի կազմակերպման գործում մեծ է մանկապատանեկան ստեղծա-

գործական կենտրոնի դերը: Խմբակներ են գործում 10 համայնքներում: Գործում են 18 անուն խմբակներ:

Ուսումնական տարվա 2-րդ կիսամյակը հազեցած էր բազմապիսի միջոցառումներով՝ ասունքի, շարադրությունների մրցույթ, մարզական առաջնություններ: Այսպես, Հանր Ասիայի ծննդյան 100-ամյակին նվիրված ասունքի մրցույթին մասնակցել են ավելի քան 74 աշակերտներ, լավագույն 7 ասունքողներ մասնակցել են հանրապետական փուլին:

«Լեզու և հայրենիք» ասունքի մրցույթին մասնակցել են 48 դպրոցականներ, որից 6-ը անցել են հանրապետական փուլ:

Մեր դպրոցականները ակտիվ մասնակցել են նաև «Արցախի պոեզիա» ասունքի շրջանային մրցույթին՝ 28 աշակերտներ, որից 2 տարիքային խմբում 6 աշակերտներ մասնակցել են հանրապետական փուլին:

Շրջանի 8 դպրոցականներ ակտիվորեն մասնակցել են Շուշիում օգոստոսի կազմակերպված պոեզիային նվիրված մրցույթին:

Այգեստանի մ/դ աշակերտուհի Լիդա Սարուխանյանը գրավել է մրցանակային 2-րդ տեղը: Բերված թվերը հուշում են, որ սովորողների մոտ առանձնակի սեր է ձևավորվում պոեզիայի նկատմամբ: Ասունքի բոլոր մրցույթներին ակտիվ մասնակցել են Խնաժախի, Խնապատի, Նորագյուղի, Անաղբյուրի, Ավետարանցի, Խաչենի, Հարավի, Այգեստանի դպրոցականները:

Մեր դպրոցականները ակտիվ են հանդես եկել նաև շարադրությունների մրցույթի շրջանային փուլում: «Բանակը մեր տունն է, մեր բերդ-ամրոցը» խորագրով շարադրությունների մրցույթին մասնակցել են 19 աշակերտներ: Հանրապետական հանձնաժողովը լավագույն շարադրություններ է ճանաչել Խնապատի, Խնաժախի, Այգեստանի, Պատարայի, Իվանյանի, կրթական հաստատությունների մեկական աշակերտների աշխատանքը՝ Անահիտ Շահրամյանը (Խնապատ, ուս.՝ Ս.Ղազարյան) և Յոդիկ Բարսեղյան (Այգեստան, ուս.՝ Կ.Հակոբյան), Լիդա Միրզոյան (Խնաժախի մ/դ, ուս.՝ Նելլի Սահակյան):

2013-2014 ուստարում «Տարվա լավագույն դպրոց» է ճանաչվել Անաղբյուրի միջնակարգ դպրոցը, «Տարվա լավագույն գինդել»՝ Նորագյուղի միջնակարգ դպրոցի գինդել Արթուր Հայրապետյանը, «Տարվա լավագույն ուսուցիչ»՝ Իվանյանի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Ստելա Բարսեղյանը, «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին մասնակցել են միջին դպրոցից:

Ասկերանի միջնակարգ դպրոցի թիմը ակտիվորեն է հանդես եկել «Բրեյն-ռինգ» ինտելեկտուալ խաղի հանրապետական փուլում:

Մեր դպրոցականները մասնակցել են մարզական բոլոր միջոցառումներին և հավաքական թիմերով մասնակցել հանրապետական առաջնություններին: Ակտիվորեն են մասնակցել Ասկերանի, Նորագյուղի, Խնապատի, Այգեստանի, Խնձրիստանի, Պատարայի, Անաղբյուրի, Իվանյանի կրթական հաստատությունների մարզիկները: 2013-2014 ուստարում շրջանի հանրակրթական դպրոցների հավաքական թիմերը, ըստ մարզածների, հանրապետությունում գրավել են հետևյալ մրցանակային տեղերը՝

«Առողջ ապրելակերպ» փառատուն-1-ին տեղ

«Լավագույն մարզական ընտանիք»-1-ին տեղ (մասնակցել է 33 առաջնությանը)

Վոլեյբոլ (տղաներ) -2-րդ տեղ

Վոլեյբոլ (աղջիկներ)-3-րդ տեղ

Բասկետբոլ տղաներ-3-րդ տեղ

Հանդբոլ (տղաներ)-3-րդ տեղ

Հանդբոլ (աղջիկներ) - 3-րդ տեղ:

Ժամանակի հրամայականն է, որ համակարգչային թվային տեխնոլոգիաները, ինչպես նաև համացանցը լայնորեն մուտք գործեն դպրոց ու դասապրոցես: Արդեն դպրոցում համակարգչային տեխնիկան և ինֆորմատիկան պետք է ուսումնասիրեն ոչ միայն որպես առանձին առարկա, այլև պետք է ծառայեն որպես ուսուցման միջոց: Ասկերանի, Նորագյուղի, Իվանյանի, Պատարայի, Աստղաշենի, Անաղբյուրի դպրոցներում դասապրոցեսում լայնորեն օգտագործում են համակարգչային և այլ տեխնոլոգիաները:

Ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բնագավառ է սովորողների ռազմախայրենասիրական դաստիարակության

հարցը, նրանց՝ հայրենիքի պաշտպանությանը նախապատրաստելը: Բանակը մեր երկրի, հասարակության ու շարադրության ամենաարժանի կառույցն է, և նրա հզորությունը կախված է մեզանից՝ ինչպիսի սերունդ ենք նախապատրաստում և ինչպիսի երիտասարդներ ենք բանակ ուղարկում:

Օգոստոսի 4-14-ը շրջանի դպրոցների 68 10-րդ դասարանցիներ, 10- օրյա ժամկետում հանգստացել են ռազմամարզական «Ասպետ» ճամբարում, նրանք կարողացել են ունենցած գիտելիքները ցուցադրել էքստրեմալ պայմաններում, իրենց դրսևորել են բազմակողմանիորեն: Ճամբարի տնօրինությունը շնորհակալական նամակ է հղել բաժնին՝ Պատարայի միջնակարգ դպրոցի զինղեկ Հայկ Իսրայելյանը լավագույն դասակի հրամանատար ճանաչվելու կապակցությամբ: Շնորհակալություն է հայտնվել նաև Խաչենի, Ավետարանցի միջնակարգ դպրոցների զինղեկներ, դասակի և վաշտի հրամանատարներ Կրեթ Գրիգորյանին և Գեդա Ամինյանին:

Մեր դպրոցականները սպորտային գանազան մրցումներում, ինտելեկտուալ խաղերում միանշանակ զբաղեցրել են 1-ին մրցանակային տեղեր:

Հազեցած էր դպրոցականների առօրյան ամառային ժամանակահատվածում:

Բազմաճյուղ և սակավակարող ընտանիքների 14 երեխաներ իրենց հանգստը անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում, «Հայկի սերունդ» ՀԿ միջոցով՝ 5 հերթափոխով Շուշիում՝ ավելի քան 70 դպրոցականներ:

ՀՀ Սպորտի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրի շրջանակներում շրջանի Ասկերանի, Խնապատի, Նորագյուղի, Իվանյանի, Անաղբյուրի, Հարավի 8 դպրոցականներ օգոստոսի 19-24-ը Ծաղկաձորում մասնակցել են ճամբարի աշխատանքներին:

Հաղորթի Տոլ գյուղում ՀՕՍ-ի ուժերով կազմակերպված ճամբարում հանգստացել են 15 դպրոցականներ:

Հունաստանի հայ համայնքի օգնությամբ Արցախի դպրոցականների ավանդակներ դարձած հանգստի կազմակերպման շրջանակներում Հունաստանում հանգստացել են Խաչենի և Խրամորթի դպրոցների 2 աշակերտներ:

Դպրոցների տնօրինության գործունեության արդյունավետությունը պայմանավորված է գիտականորեն հիմնավորված կառավարման հետ: Մի կարևոր համագանձ էր. դպրոցի աշխատանքների հստակ, անխափան գործունեությունը կախված է դեկավար-մանկավարժների նորմալ փոխհարաբերություններից, երկուստեք հանդուրժողականության դրսևորումից, սրտաբացությունից: Սակայն ընթացիկ ուսումնական տարում որոշ դպրոցներում տիրել են լարված մթնոլորտ ու լարված փոխհարաբերություն:

Ուսուցիչ-աշակերտ, ծնող-ուսուցիչ, ընտանիք-դպրոց-համայնք փոխհարաբերությունների բարելավումը, ուսուցիչների աշխատանքի և հանգստի պայմանների կարգավորումը մեծապես նպաստում են հաստատության բնականոն գործընթացին:

Տարբեր մակարդակների հանդիպումներում, խորհրդակցություններում նշվել է, որ արդյունավետ ուսուցման, որակյալ կրթության համար անհրաժեշտ են շենքային բավարար պայմաններ և նյութատեխնիկական հարուստ բազա:

Նոր ուսումնականը երկար սպասված նորակառույց, հարմարավետ դպրոցաշենքում են դիմավորել Աստղաշենի համայնքի դպրոցականներն ու ուսուցիչները:

Շրջանում 1-ին դասարան են հանձնվել 236 երեխաներ:

Վստահ են, որ բարձրացված բոլոր հարցերը, ժամանակի առումով, կզուցեն իրենց լուծումները, մանկավարժական կոլեկտիվները իրենց ջանքերը կուղղեն սովորողներին գիտելիքներով զինելուն, կյանքին նախապատրաստելուն:

Շ. ԱՐԱՐԱՅԱՆ  
Ասկերանի շրջվարչակազմի  
կրթության բաժնի վարիչ

ՄՇԱԿՈՒՅՑ

ԱՐԱՔՍ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. «ԵՍ ՄԻՐԱՆԱԿԱՑ ԵՄ ԱՐՃԱՄԻՆ»



Արաքս Մանսուրյան: Սիրված և ճանաչված օպերային երգչուհի: Ծնվել է Բեյրութում, 1947-ին Մանսուրյանների ընտանիքը տեղափոխվել է Հայաստան: Սովորել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնասիրանում, ավարտել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: 1970-92 թթ. եղել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի մեներգչուհի, 92-ին հրավեր է ստացել Սիդնեյի /Ավստրալիա/ օպերային թատրոնից, որտեղ աշխատում է առ այսօր, նաև դասավանդում է տեղի կոնսերվատորիայում՝ օտարազգիներին ծանոթացնելով հայկական երգարվեստին: Նրա շնորհիվ բազմաթիվ օտարազգի երիտասարդ երգիչների երգացանկերում տեղ են գտել Կոմիտասի և այլ հայ անվանի երգահանների ստեղծագործությունները: Մենահամերգներ է ունեցել Հայաստանում և արտասահմանյան մի շարք երկրներում՝ ծրագրում եվրոպական երգահանների կողքին ունենալով Կոմիտաս, միջնադարյան հոգևոր երգեր, հայ երգահանների ստեղծագործություններ: Նաև եղբոր՝ Տիգրան Մանսուրյանի ստեղծագործությունների անզուգական մեկնաբանողն է: Սուպրանո Արաքս Մանսուրյանի վոկալի և դերասանական վարպետության մասին ժամանակին հիացմունքով են արտահայտվել ռուսաստանյան, ամերիկյան, ֆրանսիական, գերմանական, հոլանդական և այլ երկրների երաժշտարվեստի քննադատները: Բենական շքեղ արտաքին, ծայրի նուրբ տեմբր և ինքնատիպ վոկալ տեխնիկա, արտակարգ երաժշտականություն, երկի զգացմունքային մեկնաբանություն. երգչուհու արվեստի այս յուրահատկություններն են գերում հանդիսատեսին: Նա սիրված ու ճանաչված երգչուհի է ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում, մտնում է միայն գարնանալ, թե ինչու են պետական կոչումները շնորհվում հայ օպերային արվեստի զարգացման ճանապարհին իր նշանակալի ավանդը բերած երգչուհուն: Փարաջանովը որպես «դարերից եկած հայ ոգեղենության ազնվական ու լուսավոր մարմնավորում» է բնութագրել Արաքսի՝ հայ հոգևոր երգերի կատարումները: Նրա շքեղ արտաքինի հետ համահունչ ներդաշնակում է ներքին ազնվական էությունը, աչքերում ցուլացող բարությունն ու ջերմությունը, որոնցով առիթնում է գրուցակցին: Հատկանշական է, որ նրա գեղեցկությանը հավասարապես գերվում են թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք: Նրա կանացի հմայքն ու մարդկային տեսակը լավագույնս է բնորոշել նկարչուհի Լավինիա Բաժբեյուկ-Մելիքյանը, ով երգչուհու հինգ դիմանկար է արել: «Ինձ առավելապես հուզում են Արաքս Մանսուրյանի հոգևոր երգերի կատարումները: Դրանց ոգին և երաժշտական կատարյալ ձևը, կառուցվածքը ներդաշնակ են: Հենց դրանում է կատարողի բարձր արվեստը: Արաքսը գեղեցիկ է ամեն ինչում: Նրա գեղեցկությունը հարստանում է լուսավորվում է ոչ պակաս գեղեցիկ մարդկային հատկություններով՝ հմայքով, քնքշությամբ, բարությամբ, մեծ կուլտուրայով: Որպես նկարչուհի՝ ես հմայված եմ Արաքսի ուրույն գեղեցկությամբ և նկարել եմ նրա հինգ դիմանկարները: Սակայն համոզված եմ, որ նկարելու եմ կրկին, հիացմունքով ու սիրով»:

Մեր ժամանակի մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի 75-ամյակը վերջերս հանդիսավորապես նշվեց նաև Արաքսի շնորհիվ Արաքս Մանսուրյանի և հատկապես նրա դստեր՝ Գ. Գ. վաստակավոր արտիստ, երգչուհի, Գ. Գ. Ա. Կատարյանի և Արաքսի պետական կամերային նվագախմբի համատեղ ջանքերի: Օպերային երգչուհին առաջին անգամ էր Արաքսի հետ միասին ելնում էր արվեստի իր աշխատանքներին՝ Ջիան Գոնզալեսի (տեմբր), Ջեյմս Կոկորի (կոլորատուր սոպրանո), Ռիան Սաուդերս (սոպրանո), ովքեր մասնակցեցին արգախյան համերգին: Մենք հանդիպեցինք և գրուցեցինք սիրված երգչուհու հետ:

**- Չոր ծնողները հայոց Մայր գետի անունն են շնորհել Ձեզ: Ասում են՝ մարդու անունն անապայման կապ ունի նրա ներքին էության հետ, համաձայն՞ եք:**

- Որևէ մեկն այդ հարցն ինձ չէր տվել. շատ ճիշտ եք ասում: Ես շատ եմ սիրում իմ անունը: Նախ՝ քանի որ շատ հայկական է, նաև ես հպարտությամբ եմ ներկայանում ուսանողներին, երբ հարցնում են, թե ինչ է նշանակում Արաքս: Ասում եմ՝ Արաքսը մեր գետն է, որը սահմանի վրա է, և բացատրում եմ նրանց, թե ինչ է գտնվում գետից այն կողմ և մեզ բաժանում է Արաքսը:

**- Նաև միացնում է...**

- Ճիշտ է, նաև միացնում է, ինչո՞ւ չէ... Հայրս է անունս տվել ինձ. ճաշատ հայրենասեր էր: Այդ է պատճառը, որ չորս զավակների հետ Լիբանանից տեղափոխվեց Հայաստան, և դա այն վատ տարիներին՝ 1947 թվին: Մեզ տեղավորել են Արթուրում, չէ, ավելի հեռու՝ Պենագազետում: Ես փոքր եմ եղել, ոչինչ չէի հիշում. Տիգրանը առաջնեկն է, հետո Միհրն ու Սոման, վերջինը ես եմ: Կարծում եմ՝ սա մտածված էր հորս կողմից, որ անունս լինի հայեցի:

**- Նաև բոլոր անուններն ընտանիքի: Արմատների և ընտանեկան դաստիարակության մասին խոսե՞նք:**

- Հայրս և մայրս որք են եղել: Կոտորածի ժամանակ ծնողներին սպանել են, երկուսն էլ որբանոցում են մեծացել: Հայրս Տիգրանակերտից էր, մայրս՝ Մարաշից: Միացումը եղել է Լիբանանում: Մայրս ամերիկյան որբանոցում է եղել, հայրս՝ կարծես Հայաստան: Հայրս շատ վաղ է մահացել՝ 46 տարեկանում: Մայրս մինչև 93 թվականն ապրեց և պատմում էր, թե ինչպես են հարևաններն իր հորն այրել, ինչպես ինքը մոր շալակին, քրոջ ու եղբոր հետ փրկվել են: Հայրս շատ խիստ էր հայեցի հանդեպ, եթե մեր խոսքի մեջ մեկ օտար բառ էր լինում, մենք պատժվում էինք, հայացքով էր պատժում, նույնիսկ եթե «հա» էինք ասում, բարկանում էր՝ ասելով. «Հա-ն հայերեն չէ, «այո» պետք է ասել»: Եվ այդպես ես իմ երեխաներին եմ մեծացրել՝ Շուշանին ու Մարիամին: ընտանեկան ավանդույթը շարունակվում է:

**- Հայրական ընտանիքից ուրիշ ի՞նչ եք փորձել պահպանել Չոր ընտանիքում:**

- Հայրենասիրություն՝ նախառաջ: Նաև մայրս դեմ էր, երբ անունները փոխում էին: Հարևանների ունեիք, անունը Սիրանուշ էր, երբ ասում էին Սիրուշ, մայրս բարկանում էր. «Ի՞նչ Սիրուշ, անունը Սիրանուշ է, պետք է ամբողջությամբ հնչի՝ մաքուր հայերեն»: Չէր սիրում, երբ Հայաստանը թողնում-զնում էին: ... Ծնողներս երգում էին. որբանոցի երգչախմբում էլ են երգել. մայրս աղջիկների որբանոցում էր, հայրս՝ տղաների: Որբանոցից հետո, երբ նրանք ներկայացան ու ունեցել, մայրս էլ ներկա է եղել և հորս ձայնին սիրահարվել է: Եվ միացումը եղել է այդ երաժշտական հինգ վրա: Հորս երգածներն էր Արթիկից մեզ տեղափոխել Երևան, որովհետև շատ էր

ուզում իր երեխաներին արվեստի մեջ տեսնել: Քանի որ Տիգրանը տան մեծն էր, հայրս նրա հետ շատ էր կապված, ես փոքր էի, վայելում էի հորս չափազանց սերը: Երբ փողոցում էինք, իմ ձեռքը միշտ հորս ափի մեջ էր և իր գրպանում: Ես իմնա էլ հիշում եմ հորս ձեռքերի ջերմությունը:

**- Չե՞տևում եք Շուշանի երգչական կարիերային:**

- Հետևում եմ և շատ եմ սիրում իր հայեցի երգեցողությունը, նաև՝ այլ լեզուներով: Ասեմ, որ շատ տաղանդավոր է Շուշանը: Եվ երբ քաղաքականության մեջ մտնելու առաջարկ ունեցավ, ես վախեցա՝ հանկարծ արվեստը չտուժի: Ասաց՝ կմտածեմ: Առաջին ամիսները մի քիչ մտախոգ էի, բայց հիմա ուրախ եմ, քանի որ արվեստի իր գիտելիքներով կարողացավ օգտակար լինել: Քաղաքականությունը բառից ես մի քիչ վախեցնում եմ, առհասարակ չեմ սիրում քաղաքականության մեջ մտնել և չեմ սիրում քաղաքականությունը: Աստված է տնօրինում ամեն ինչ:

**- Չփորձեցի՞ք հետ պահել քաղաքականությունից:**

- Ո՛չ, չփորձեցի, միայն ասացի՝ հուսամ արգելք չի լինի երգեցողությանը, արվեստին: Քանի որ ինքը շատ նվիրվեց, և իր նվիրումը անասանում է, երեխայի պես ուրախանում է ամեն կատարած գործից: «Մամա՛, տեսար ինչ արեցի, այս արեցի, երաժշտական գործիք տարա, թատրոն պիտի տանեմ...»: Տեսնում եմ իր հրճվածքը՝ իր արած ամեն լավ գործից և օգնությունից հետո: Ես իր անունը երբեմն մկեր եմ ասում և հաճախ կատակում. «Շուշան ջան, ես քո անունը Նվեր պիտի դնեի, Շուշանը սխալ է»:

**- Չոր մուտքը երաժշտարվեստ ինչի՞ց սկսվեց:**

- Դեռևս մանկապարտեզում էի, 5-6 տարեկան: Շատ քիչ բան եմ հիշում իմ մանկությունից, հիշում եմ մեր տունը, ծնողներիս, չորս երեխաներիս մի սենյակում: Արթիկում, ցուրտ ձմեռն եմ հիշում, ձյունն եմ հիշում մինչև ծնկներս և հիշում եմ մեր մանկապարտեզը, որտեղ մեզ քնելուց առաջ տանում էին պարտեզ, և ես կանգնած սպասում էի, թե ուսուցչուհին երբ պիտի ասի. «Արաքսիկ, մի բան երգիր»: Եթե չասեր, արտասվում էի: Քանի անգամ է հարցրել լացիս պատճառը և լսել նույն պատասխանը՝ չէրգեցի: Ծիծաղում էր դաստիարակչուհին: Հիշում եմ՝ այնտեղ մի փոքրիկ առև կար (որի քջքնոցն էլ եմ հիշում), այնտեղ բոլոր երեխաները մտնում էին, ու ես կանգնում, երգում էի, չեմ էլ հիշում՝ ինչ, հայկական-ժողովրդական երգ:

**- Ընտանիքի՞ց եկած երգեր էին դրանք:**

- Այո՛, 8-9 տարեկանում եկանք Երևան, որտեղ շարունակեցի ուսումնս դպրոցում, 17 տարեկանում ուսումնարան դիմեցի, հետո կոնսերվատորիա: Երբ տանում էին, ես չէի ուզում օպերային երգչուհի դառնալ: Իմ երազանքն էր կամերային երգչուհի դառնալ, ռադիո ընդունվել, սինֆոնիկ նվագախմբի հետ երգել: Այդ տարիներին հաճախ էի ելույթներ

ունենում: Հեռուստատեսությունում կար «Հայ երգի ակումբ» հաղորդաշար: Այդտեղ երգում էի մեր հնագույն երգերը՝ ակապելա, Ակնա երգեր, բոլոր մեր երգերը, որոնք անմշակ են, պարզ, իրենց նախնական մաքրության մեջ: Հետո՝ Կոմիտաս, Կոմիտասի շատ երգերի առաջին կատարողը եղա: Կոմիտասագետները խոսեցին Ռոբերտ Աթայանի, չգիտեմ ինչո՞ւ, ինձ էր դիմում, որ երգեմ բոլոր նորահայտ երգերը: Մենք բազմիցս միասին համերգներով հանդես ենք եկել, երբ ինքը հայտնաբերում էր նոր երգ՝ «Ձուլո» կամ «Մարոն և կայնե», որոնք չկային այդ ժամանակ առաջին հատորում: Հետո մի օր զանգահարեց. կոմիտասյան «Անուշ» օպերայից հատվածներ էր հայտնաբերել և հրավիրեց իրենց տուն: Հաջորդ օրը գնացի և սկսեցի պատրաստել օպերայից հատվածներ: Եվ ներկայացրիք Հովհ. Թումանյանի տուն-թանգարանում:

**- Կա՞ն այդ ձայնագրությունները՝ կոմիտասյան «Անուշ»:**

- Այո, միայն ես եմ կատարել և, բարեբախտաբար, հեռուստատեսությունից վերցրել եմ: Ինչ խոսք, որակյալ չէ, բայց նուտաները հնչում են գոնե:

**- Ինչո՞ւ էլ առանձնահատուկ:**

- Մեծն Կոմիտասը նկատի է ունեցել, որ կատարվի ժողովրդական գործիքներով, ոչ սինֆոնիկ նվագախմբով: Այդ ժամանակ, երբ հայտնաբերվեց, խոսակցություն կար, որ Տիգրան Մանսուրյանը պիտի շարունակի այս օպերան, բայց չեղավ...  
**- Ինչպես ինքն է մի առիթով ասել. «Կոմիտասի մեծածն ծնունդը ոչ մեկս չկարողացնեմ գտնից վերցնել»:**

- Երբ տես, կարծում եմ Տիգրանն էլ չէր ուզի շարունակել: Այդքանով մաքրության մեջ մնաց, թեպետ, իհարկե, միայն Մանսուրյանը կարող էր շարունակել և պահպանել այդ մաքրությունը:

**- Երկի թե՛ առաջին մեծ հաջողությունը եկավ կոմիտասյան «Անուշ» հետ, կարելի՞ է ասել՝ դա շրջադարձային եղավ ձեր կյանքում:**

- Թող մեծամտություն չլինի, բայց դա եկավ կոմիտասյան երգերի հետ, երբ դրանց առաջին կատարողը եղա, այդտեղից սկսվեց հաջողությունս: Երբ Ռոբերտ Աթայանի խորհրդով երգում էի դրանք, այդ տարիքում չէի գիտակցում, թե ինչ եմ անում: Կարծես արյան կանչն էր, հիմա եմ հասկանում: Օ՛, կոմիտասյան երգերի առաջին կատարողն ես եղել, «Անուշ» միակ կատարողն ես եղել, ներկայացրել ես համերգներով, հեռուստատեսությամբ և բազմիցս: Երբ հիմա հետադարձ հայացք եմ նետում, տեսնում եմ՝ ինչ լավ բաներ եմ արել, սա արյան մեջ է եղել:

**- Հետագա հաջողություններից խոսե՞նք, Կոմիտաս, հետո՞:**

- Գիտեք, Կոմիտասից հետո չկա, Կոմիտասի հետ միաժամանակ կա, Կոմիտասը միշտ կա, նույնիսկ իմնա ուսանողներս են երգում, իրենց քննության ծրագրում պարտա-

դիր Կոմիտաս կա: Ջուզախեռ օպերային ներկայացումներ եղան: Նույն երևանում ապրած տարիներին, երբ օպերայում զբաղված էի, տարին երկու-երեք համերգ էի ունենում պարտադիր և համերգներով շրջագայում էի տարբեր երկրներում, ձայնագրեցի իմ ձայնը Ֆրանսիայում, Լիոնի օպերայում ինձ հատկացվեց ստուդիա (այս մասին ես երբեք չեմ խոսել, հիմա հիշեցի հանկարծ) և ձայնագրեցի կոմիտասյան տասնութ երգ, դա 1993 թվին էր:

**- Պայմանագրե՞րը տարան Ավստրալիա, թե՞ այլ հանգամանքներ:**

- Պայմանագրերը՝ առաջին հերթին. 1992թ. հայ համայնքի կողմից ես հրավիրված էի Ավստրալիա՝ համերգների: Այդ ժամանակ ես ունեցա ունկնդրում Սիդնեյի օպերայում: Սիրեցին: Նաև ինձ հետ տարել էի իմ նկարները տարբեր ներկայացումներից: Նամակ ստացա. «Շատ սիրեցինք, առիթի դեպքում ձեզ կիրավիրենք»: 1994թ. վերջին հրավեր ունեցա՝ 1995-ի փետրվարին Տուրանդոտում Լիոնի դերը երգելու: Երբ գնացի, ամուսնության առաջարկ ունեցա, ես վերադարձա և Մարիամիս հետ գնացինք Ավստրալիա: Շուշանս մնաց այստեղ: Ասացի. «Շուշան ջան, գնամ, Տուրանդոտը երգեմ, վերադառնամ», մնացի այնտեղ: Հրաշալի ամուսին ունեմ, ով մինչև այսօր՝ 20 տարի է, իմ ամեն մի հաջողությամբ ուրախանում է: Հակերը եզրիտահայ է, հրաշալի անձնավորություն է, նուրբ, արտիստիկ անձնավորություն, եզրիտասում նկարչություն սովորել է Լեոնարդո դա Վինչիի անվան դպրոցում և մրցանակներ է շահել, հետո տեղափոխվել է Ավստրալիա՝ հուսալով շարունակել իր գործը, բայց ստիպված ուրիշ աշխատանքներ է կատարել: Ունի իր քիզնեղ /փորագրիչ-դիզայներ է/, շատ տաղանդավոր և բժախնիք է իր գործի մեջ, զուհագեռ նաև սկսեց նկարել: Հուսով եմ՝ շուտով կվերադառնանք Հայաստան և կիրակաանանա նրա երազանքը:

**- Ե՞րբ կլինի վերադարձը:**

- Վերադարձը միշտ իմ մեջ է, ամվերջ վերադարձ: Ամեն անգամ, Հայաստանից երբ գնում եմ, մեջ տխրություն է: Չեմ ուզում տարիքս շատ հասունանա, նոր գամ այստեղ. քանի ընդունակ եմ աշխատելու, քանի կարող եմ օգնել երգիչներին, ուզում եմ դասավանդել:

**- Կարոտո՞ւմ եք Հայաստանը:**

- Որպեսզի կարոտս սուր չլինի, ինձ տվել են աշխատանքի: Հիմա պիտի գնամ Ավստրալիա և ինքս ինձ ասում եմ՝ ո՞ր եմ գնում այդ անապատը, ինչի՞՞ եմ գնում, ես սիրահարված եմ Արցախին: Երբ Շուշանս ասում էր. «Մամա, ես ուզում եմ Արցախում ապրել, ես այնտեղ եմ ինձ լավ գտնում, այնտեղ է իմ տեղը», հիմա ես հասկանում եմ: Եվ ոչ միայն ես, նաև երգիչներս: Երբ Աստված ստեղծում էր այս աշխարհը, ամբողջ սերը և ուշադրությունը տվել է Արցախին, այսքան գեղեցկություն մի տեղ, այսքան հրաշք մի տեղ, բառ չեմ գտնում ասելու՝ սիրտս ինչպես է լցված սիրով առ Արցախ:

**- Այսօր հայ երաժշտարվեստում ի՞նչն է ձեզ մոտ ավելի շատ մտախոգության տեղիք տալիս:**

- Գիտեմ, որ Հայաստանում հիմա շատ երգիչներ, երգչախմբեր կան, որոնք երգում են Կոմիտաս: Ցանկությունն է, որ հայեցի երաժշտությունը ավելանա: Երբեմն երգում եմ, հայերեն բառեր են, բայց մեղեդին ոչ մի կապ չունի հայ երաժշտության հետ: Նախընտրելի է, որ մաքրվի, հասկանում եմ, որ ժամանակ է պետք, որովհետև դեռ շատ քիչ ժամանակ է անցել... Անկախության տարիներին բնական է, որ ազդեցություններ եղան, ազատությունը դրսից բերեց շատ էլեմենտներ: Լավ կլինի, որ ամեն արվեստագետ գիտակցի՝ առաջնայինը իրենն է, թող ամեն մեկը իր երկրի մեջ երգի իր երաժշտությունը: Մենք մերը պիտի պահպանենք:

**- Ի՞նչ կամոքեք արցախցիներին:**

- Սիրահարված եմ Արցախին, գիտեմ՝ արցախցին ինչքան է սիրում իր հողը և միշտ հպարտանում են: Արցախում մաղթում են ուժ, Աստծո օրհնությունը և լույսը հավերժ լինի ձեզ վրա, որովհետև այս բնությունը, այս հողը միայն ձեզ է արժանի, ձեզ է վայել, Աստված ձեզ համար է ստեղծել, ուրեմն պահեք Աստծո օգնությամբ:

Հ. Շիրազ - 100

ՀՈՎՏԱՆՆԵՆ ՇԻՐԱԶԻ ՄԱՐԴ - ԻՊԵՍԱԸ



Հովհան-նես Շիրազը զգացմունքի բանաստեղծ է: Ինչ գաղափար էլ արտահայտում է նա, առաջին պլան են մղվում զգացմունքը, ներքին ապրումները, որոնցով բանաստեղծական պատկերները դառնում են ավելի հմայիչ ու սրտամուտ: Նրա պոետիկայում մի առանձնակի տեղ են գրավում մայր կնոջը նվիրված երգերը:

Մի կողմից հայրենի գրականության ավանդույթի ուժը, մյուս կողմից անձնական կյանքը՝ մեծ սերընդի նկատմամբ, մարդ-իդեալի որոնումը գրողին մղել են մայրության հետ կապված թեմայի ոլորտները:

Մորը նվիրված ստեղծագործությունները Շիրազը առանձին գրքուկով հրատարակել է 1968 թվականին «Հուշարձան մայրիկիս» խորագրով, որը, ընթերցողների կողմից ջերմ ընդունվելուց հետո, վերահրատարակվել է՝ հարստացած վեց տասնյակից ավելի նոր բանաստեղծություններով: Հայրենասիրություն, մայրենի լեզու, մարդասիրություն, սեր, ընտանիք, որդեսիրություն, խիղճ, հավատ, մայրասիրություն, կյանքի հարատևություն՝ ահա ոչ լրիվ ցանկը այն բոլոր թեմաների, որոնք իրենց լիարժեք արտացոլում են գտել պոետի՝ իր մայրիկին նվիրված անզուգական գործերում:

Պարական բնադատությունը ինչ-որ շրջանում Շիրազին մեղադրել է այն բանի համար, որ իբր նա «անվերջ երգում է իր մորը»: Արդարև, նա մորը նվիրված բազմաթիվ բանաստեղծություններ ունի համարյա բոլոր ժողովածուներում: Բայց ինչո՞ւ են տուժել այդ ժողովածուները: Ընդհակառակը, այդ թեմայով ավելի ուժգին է հնչել նրա բնարը: Դրանցից ամեն մեկը բանաստեղծական մի գյուտ է՝ ձևի ու բովանդակության գեղեցիկ ներդաշնակությամբ, որ կարող է փառք ու պատիվ բերել ամեն մի իսկական բանաստեղծի: Շիրազի մարդ-իդեալն իր մայրն է մասնավորապես, և մայրերը՝ ընդհանրապես: Նա մորը համարում է լույսի շող, աղանդի մի բյուրեղիկ, որ ճանաչելի է դարձնում աղանդուն ընդհանրապես: Եական չէ, որ մայրը փոքրիկ է: Մինույն է, նրա գիրկը տաք է ու ջերմ, բուռն է չափ սիրտը՝ համապարփակ, նրանից ճառագող ամեն մի շողը՝ մի ողջ արեգակ:

Մայրս փոքրիկ, մայրս խելո՛ղ,

Մայրս մի մայր հասարակ, Մայրս այս մայր երկրի մեջ Արևի դեմ մի ճրագ:

Մայրը Շիրազի երգերում բարության, սրբության, մարդկային առաքինությունների մի համաձուլվածք է: Նա մորը համեմատում է մեկ Աստծո, մեկ՝ արևի, հայրենիքի, նույնիսկ՝ կնոջ հետ: Բոլոր համեմատությունների մեջ, սակայն, մոր սերն ստանում է բանաստեղծական վեհություն ու զգացմունքի առավելություն, նրան կարող է հավասարվել միայն հայրենիքի սերը: Բանաստեղծական հիանալի մի նմուշ է «Կշեռքը»: Հիպերբոլիկ պատկերներով ու համեմատություններով սկսվող այս բանաստեղծությունը ավարտվում է շատ դիպուկ ու խոր ընդհանրացումով: Մոր սերը նա համեմատում է աշխարհի շատ մեծությունների, անգամ՝ Հիմալայի հետ, և դարձյալ այն հարթում է: Կշեռքին է դնում նաև սիրած աղջկա սերը:

Քո սերն, իմ սիրած, քո սերն էլ դրի, Վեր ու վար արին ճար ճարի, Բայց երբ անսահման իմ հայրենիքից Մի բուռ հող դրի,

Եկավ համբուրեց ճար ճարի: Միայն հայրենիքը, հայրենիքի սերը կարող է համեմատվել մոր, ապա՝ մոր սիրո հետ: Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ նա մայր ասելով՝ ուղղակի հայրենիք ու լեզու է հասկանում:

Մայր հայրենիք ու մայր լեզու՝ Չեզ են խնկում՝ մորս մեջ,- Դու գույզ տանարն իմ աստծու, Դու պաշտամունքն իմ անշեջ:

Լավ է ասված, ու այս մասին խոսք լինել չի կարող: Չմոռանանք մեզ, որ մոր կերպարը, ընդհանրապես, շատ է երգվել համաշխարհային ու հայրենի գրականության մեջ, շատ գեղեցիկ, հուզիչ տողեր են գրվել նրա մասին, բայց Շիրազը գրել է յուրովի, իրեն, միայն իրեն հատուկ գունագեղ պատկերավորությամբ: Նա բացել է մայր կնոջ հոգու գեղեցկությունները, բնավորության բարեմասնություններն ու հրաշալիքները: Շիրազի պոետիկայում մոր կերպարը տեսանելի է, ամբողջական ու առնչման: Բանաստեղծի աշխարհամայրն ու աշխարհի շատ երևույթներ նա մեկնաբանում է այդ թեմայով: Հայ ժողովուրդը ասրել է եղեռնի դառնությունը: Այդ ծանր զգացումը ասրել է նաև նրա մայրը: Անցել են տարիներ, ու կաթի միջով, սերնդեսերունդ անցել է այդ ծանր վիշտը, և բանաստեղծը մոր միջոցով արտահայտում է կորստի ցավը, արժևորում այդ կորուստը առողջ բանականությամբ, բանաստեղծացնում, սրբացնում անասականների հիշատակը՝ արտահայտելով իր ցասումը՝ աշխարհի անարդարությունների, աշխարհի քարտեզը ձևող ու վերածող

հզորների դեմ: Հայոց աշխարհի կորստի մեծ վիշտը շարունակ մորմոքում է հայրենասեր բանաստեղծի զգայուն սիրտը, բայց ինչ կարող է անել, երբ աշխարհի սահմանները սրով են չափվում, և աշխարհի անարդարություններից հոգնած նրա խռովահույզ հոգին երբեմն արդթք է կարդում ճակատագրի դառը խաղի առաջ:

Մ'իս, մի՞թե պիտի անպատիժ մնամ Դժոխքի արժան մեղքերն անսահման:

Բանաստեղծը այն կարծիքին է, որ, եթե մարդը բնության միակ անկաշկանդ շարժիչ ուժն է, ապա նրան ստեղծող, պահող, աճեցնող, կյանք տվող ամենահզոր արարածը մայր կինն է: Նա է, որ աշխարհ բերելով նորածնին՝ հաղթում է մահին... «Կինը մահին հաղթող կյանքի արքայուհին է»: Վիկտոր Գյուգոն ասել է. կինը թույլ արարած է, մայր կինը՝ ամենահզոր:

Այդ հզորությունն է, որ ամենքին տեսանելի է դարձնում Շիրազը: Բանաստեղծը լավ գիտի, որ օջախի ծուխը հավերժ պահպանող մայրն է, որը միաժամանակ, ինչպես ինքն է ատում՝ տան ծառան է և արքան:

...Մայրս, մեր հացն է, Մեր տան աստվածն է մայրս...

Շիրազի՝ մոր նկատմամբ տածած սերը մորը կորցնելուց հետո վերածվում է անհուն ողբերգության: Բանաստեղծի տողերում գույները թանձրանում են, խտանում, տեղ-տեղ դառնում ռոմանտիկորեն հրաշապատում:

«Մորս մահով մոր իմացա մահն ինչ է...»: Այսպես է վերնագրել նա իր բանաստեղծություններից մեկը և անսահման զարմանում է ցավում է, որ մայրը՝ Աստղիկը՝ իր սրբազան աստվածուհին, դարձել է գերեզման: Պոետը ուզում է հավատալ պատրանքների, երագների, հրաշքների, միայն թե իր երկրային հարազատին տեսնի կենդանի:

Այնքան երկար նայեց Սեռած մորս պատկերին, Որ ինձ թվաց, Թե դողաց Իմ անունը շուրթերին...

Մոր մահով, ասես, խախտվում է Շիրազի հավատը վերջալույսի ու լուսաբացի հաջորդականության վերաբերյալ:

Հապա ո՛ր է՝ մորս աչքերն էլ չեն բացվում,

Ո՞նց հավատամ վերածնվող վերջալույսին:

Նման բնույթի բանաստեղծությունների մեջ, երբ գրողը զգում է, որ իրողությունից դժվար է խուսափել ու հաշտվում է մոր մահվան փաստի հետ, նրա պոետիկայի գույները, երբեմն մեղմանում են, որոշ բանաստեղծությունների մեջ՝ վերածվում համատարած ճերմակության, սակայն խոսում ու գունեղ ճերմակության:

Չյուն է իջնում՝ կուտակվում,

Մորս վրա վերկից, Ասես փետուր է թափվում Հրեշտակի թևերից: Գերեզմանի այս հեռվում Մեղմ դիզվում է թախծալից, Մորս վրա մարմարվում՝ Շիրմաքար է թվում ինձ...

Պատկերը, հիրավի, գեղեցիկ է, ամնոռաց: Բանաստեղծը այն մտքին է, որ մեծ է հավատի ուժը: Մարդու համար, թերևս, ավելի թանկ բան չկա, քան հավատը: Մեծ է եղել մարդու հավատը Աստծո հանդեպ դարեր շարունակ: Նա աղոթել է աստծուն՝ իր վերջին հույսը կապելով նրա հետ: Բայց շատ է նսեմանում այդ գործը հավատը մոր սիրո կողքին, որովհետև՝

Աստվածներն էլ սատանաներ դուրս եկան:

Այսպես ախար, քույրը քոց կղավե, Սուրբ է մնում միայն սիրտը մայրական, Մ'իս, լույ մայրն է սուրբ ու վեհ:

Շիրազը իր բանաստեղծական ներշնչման աղբյուրը համարում է մոր սերը:

Ու եթե մեռնես, Համբուրեք հողս մորս արցունքով, Միայն մայրական արցունքն է անկեղծ, Նա իմ շիրմն էլ կլցնի կյանքով, Չէ՞ որ մոր սիրով դարձա բանաստեղծ:

Պոետի մայրերգությունը, ճիշտ է, վերաբերում է իր մորը, բայց հիանալիորեն իր մեջ ընդգրկում է բոլոր մայրերի համահավաք գծերը, նրանց մեջ եղած բնորոշը, տիպակալը, մաքուրն ու մարդկայինը: Դրա համար էլ՝ քանի մայր կա, պետք է պաշտել որպես սրբություն, իսկ կյանքից հեռացած մոր գերեզմանի առաջ, ինչպես բանաստեղծն է ասում:

Անցողո՛ր, խնամարհիր Գլուխը քո սեզ, Այստեղ հանգչում է Մի բուռ տիեզերք...

Շիրազի՝ մորը նվիրված բանաստեղծությունները մի-մի գրական կոթողներ են, թանկ ու մնայուն կոթողներ, որ ամեն մի հայի, Հայաստանում լինի, Սփյուռքում, Արցախում թե աշխարհի հայաշատ ամենափոքր վայրում, պիտի հուզեն, սեր ու կարոտ, ուժ ու կորով ներշնչեն դեռ երկար, շատ երկար տարիներ, դար ու դարեր:

Ասելիքն իմ ուզում են ավարտել Վարպետի իմաստուն տողերով. «Շիրազը հոյակապ դեմք է մեր պոետիկայի պառնասուն, հորդաբուխ ու ճշմարիտ բանաստեղծ: Նրա ամեն մի բանաստեղծություն մի գյուտ է՝ զարմանալի պատկերներով...»

Խորհմաստ «Բիբլիականի», ծաղկաբույր «Խջեզարթի» և մյուս պոետների կախարհ հեղինակը հետևողականությամբ շրջանի ամենամեծ հայ լիրիկն է: **Սիջայել ԲԱԼՅԱՆ Թոշակառու ուսուցիչ**

ԲԱՐԵՎԱՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՄՈՒՐԶ

ԼՂՀ մանկապատանեկան մարզադպրոցի վոլեյբոլի աղջիկների հավաքականը, երևանում տեղի ունեցած մրցումներում գրավելով առաջին պատվավոր տեղը, հնարավորություն ունեցավ նոյեմբերի 9-19-ը լինելու Ֆրանսիայում՝ ընկերական հանդիպումների նպատակով:

Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչներ Գայանե Մելքունյանի և Մելրոս Մնացականյանի ղեկավարությամբ ութ սաներ բարեգործ-հովանավորների շնորհիվ հայտնվեցին աշխարհի մայրաքաղաքում: Նրանք հյուրընկալվեցին ֆրանսահայերի ընտանիքներում: Ընկերական խաղերով հանդես եկան Մեդոնի, Իսի Լե Մուլինոյի, Կորբուվայի և այլ թիմերի հետ: Գրավեցին երկրորդ պատվավոր տեղը ու պարգևատրվեցին գավաթով, մեդալներով, վոլեյբոլի գնդակներով: Ամեն ինչ բարձր մակարդակով էր կազմակերպված. ամեն երեկո հավաքվում էին հյուրընկալող ընտանիքները՝ հավաքականի մասնակիցներով:

Նրանց համար էքսկուրսիաներ կազմակերպվեցին դեպի Եֆեյան աշտարակ, Նոտերդամ Դե Պարի /Աստվածամոր տաճար/, Վերսալյան պալատներ: Ճամփորդեցին Սենայի վրայով և ամբողջ Փարիզով:



Այնուհետև նրանց հյուրընկալեց Մեդոնի քաղաքապետը և նախաճաշ կազմակերպեց

նրանց պատվին:

Նոյեմբերի 16-ին մասնակցեցին Ֆրանսիայում գործող «Նավասարդ» հայկական պարի համույթի ելույթին, որը իր ազգային պարերով գեղեցիկ ներկայացրին:

Այդ օրերին Փարիզում էին գտնվում «Արցախի ծայեր» խմբի անդամները, որոնց համերգի ունկնդիրները դարձան նաև մեր վոլեյբոլիստուհիները: Նրանք այցելեցին նաև Հայ Ավետարանչական և Առաքելական եկեղեցիներ ու մասնակցեցին պատարագներին:

Մեր հայրենակիցներին հյուրընկալեց նաև Իսի Լե Մուլինոյի քաղաքապետը: Ամենուր ջերմ վերաբերմունք, մտերմիկ զրույց, կարոտաբաղձ հանդիպումներ...

Մի տեսակ երազ էին թվում այն տասը օրերը, որ աղջիկները անցկացրին Փարիզում: Նրանք ավելի շատ տպավորված էին քաղաքի ճարտարապետությամբ, մարդկանց ջերմ հյուրընկալությամբ ու քաղաքավարությամբ, քաղաքի իդեալական մաքրությամբ ու զեղեցկությամբ:

Նրանց երթուղին՝ երևան-Փոփոսպոլ/Կիև/Փարիզ և հակառակ ուղղությամբ, շատ հաջողված էր, ու նրանք երջանիկ էին:

Պայմանավորվեցին պատասխան խաղով հաջորդ տարի հյուրընկալել ֆրանսիացի իրենց հասակակիցներին:

Այս տպավորիչ ճանապարհորդության համար նրանք իրենց երախտագիտություն են հայտնում ԼՂՀ սպորտի պետական կոմիտեին, պրն Միշել Տանկրեզին, որի անմիջական միջնորդությամբ և ֆրանսահայ բարերանների միջոցներով նրանց բախտ վիճակվեց լինել Ֆրանսիայում:

Հատկապես երախտապարտ են իրենց մարզիչներին՝ Գ. Մելքունյանին և Մ. Մնացականյանին, որոնք մայրական ջերմությամբ ու հոգատարությամբ շրջապատեցին նրանց այդ բոլոր օրերին, մեծ պատասխանատվությամբ ապահովեցին երեխաների անվտանգությունը:

Շնորհակալություն բոլոր շահագրգիռ մարդկանց՝ մեր սաների նվիրական երազանքն իրողություն դարձնելու համար:

**Ս. ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՀՈՒՍԱՐԱՐ**  
ԽՄԲԱԳԻՐ՝  
Ս. ԽԱԶԱՐՅԱՆ

Հիմնադիր՝  
**«Լուսարար»**  
ՓԲԸ

Ստեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 01.12.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: